



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

# ՀԱՅՈՂՁՆԵՐ

Ականաց կարգավոր համար

Բ.

ՏԵՇԻՐՈՒԿ

Մ. Ե. Թարխանեանց

ՎԵՐԱԲԵՐԴՈՒԹՅՈՒՆ

Տպարան Մայր Արքույթ Մորոյ Եղիշևձմէի

1901

205: 28  
F - 35

01 MAR 2013

0005932 05

Дозволено Цензурою 13 Февр. 1901 г. г. Тифлисъ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԽԱՂԱԳՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

«Կանայք, հնազանդ լերուք արանց ձերոց, որպէս և վայել է ի Տէր: Ա'ք, սիրեցէք զկանայս ձեր և մի՛ գառնացուցէք զնոսա: Որդիք, հնազանդ լերուք ծնողաց ձերոց յամենայնի, զի այն է հաճոյ առաջի Տեառն: Հարք, մի՛ զայրացուցանէք զորգիս ձեր, զի մի՛ տըտմեսցին: Մառայք, հնազանդ լերուք տէրանց ձերոց յամենայնի, մի՛ առ ականէ ծառայութեամբ՝ իբրև մարդահաճոյք, այլ միամտութեամբ սրտի երկնչել ի Տեառնէ» (Կող. Գ. 18—22 և Եփ. Զ. 1—10):

Պօղոս Սրբազան առաքեալն որևէ է տան մէջ սէր, խաղաղութիւն, միաբանութիւն և քաղցր կենակցութիւն յարատել ամրապնդելու նպատակաւ, որոշ որոշ սահմանում՝ է գերգասատանի բոլոր անդամոց պարտը և իրանութիւն: Պարտքով և իրաւունքով կապուած են կինն՝ մարդոյ հետ, մարդն՝ կնոջ հետ, ծնողներն՝ զաւակաց հետ և զաւակներն՝ ծնողաց հետ. ծառաներն իւրեանց տէրանց հետ

և տէրերն ծառաների հետ։ Պարտուց և իրաւանց անթերի կատարելովն միայն կարելի է թագաւորեցնել գերդաստանների մէջ համեմաշխութիւն, միութիւն և սիրով համեմեալ կենցաղավարութիւն։ Ընդհավառակն՝ ուր որ ջատիւ չեն կատարուում պարաքերն և իրաւունքներն, տեղի են ունենում խեթ և աւելութիւն, քայքայուում են սիրոյ և միաբանութեան կապերն, տիրում է խռովութիւն և բաժանումն, և Աստուծոյ օրհնած տունն դառնում է տուն ցաւոց և տուն դառն կենակցութեանց։ Որպէս զի կարողանակը լաւ հասկացնել իւրաքանչիւրի պարագալը և Երաւանիւր, այս պատճառաւ խօսենք ամեն մէկի վերայ առանձին առանձին։

Ա. Կանայի, հնապահութ եղբ յէլ ճարդոց, ինչպէս և վայել է Տէրովնով—Քիսապոսի։—Կնոջ և մարդոյ պարտուց և իրաւանց մասին արդէն խօսած ենք մեր Դ. քարոզի մէջ, վասն որոյ այս տեղ համառօս կը խօսենք։ Հայաստանեաց առաքելական և Ա. Եկեղեցին՝ պատճենութեան ժամանակ հարսից նախ հարցմանը ստանում է «Թնդ է հահ հնապահութ եմ» ազատորէն ուրար և ապա պսակում և միաւորում իւրաբու հետ։ Նմանապէս պահանջում է Եկեղեցին և փեսայից սոյն երաշխաւորութիւնը «Թնդ է հահ պէլ եմ» ամեն ձախորդ հան-

դամանկըներում ևս և ապա օրհնում է պստկը։ Կանայք իւրեանց մարդոց հնապահութելով ոչինչ չեն կորսնցնում, այլ ընդհակառակն կատարում են իւրեանց հրապարակական արած ուխտը, կատարում են Աստուծոյ հրամանը—«Կանայի, հնապահութ եղի՛ յել ճարդոց՝ Քիսապոսի»։ և այսպիսով թագաւորեցնում տան մէջ խաղաղութիւն, անքակտելի սէր, վստահելի համերաշխութիւն, օրինակելի ախպար և սրբացեալ կենցաղավարութիւն։ Վերջապէս կանայք պարզաբանութ են մինչեւ ի մոհ հնապահութ և հաւատարացիմ լինել իւրեանց մարդոց և իրաւանութ ունին պահանջել իւրեանց մարդիկներից վերջին ժայը հաւատարացնութիւն ամուսնութեան սուրբ ուխտին և անխախտ հաւատարացնութիւն։ Մարդիկ պարզաբանութ են աղջուաբանը վարութիլ իւրեանց կողակիցների հետ՝ նուաբանը վարութիլ իւրեանց կողակիցների հետ, վերջունը կենցաղավարիլ նոցա հետ, «Ինչպէս ակար անօնների հետ», իբրև բարի օրինակ իւրեանց զաւակաց, և իրաւանութ ունին պահանջել իւրեանց կիներից վերջին ժայը հաւատարացնութիւն, անարարացնութիւն, պարբեսութիւն և աղջուաբանը և բարի։ «Մարդիկ խոհեմութեամբ ընտանիք կերու են իւրեանց կանանց հետ, ինչպէս կերու անօթի՝ պատիւ անելու կանանց» (Ա. տկար անօթի՝ պատիւ անելու կանանց) (Ա. Պետ. Գ. 7): «Իւրաքանչիւր ոք իւր կինը

այնպէս սիրելու է՝ ինչպէս իւր անձը» (Եփ. Ե. 33): «Կիներն իւրեանց մարդոց հնազանդ լինելու են ինչպէս Աստուծոյ» . «Կիներն պէտք է վախենան իւրեանց մարդիկներից» (Եփ. Ե. 22 և 23): «Որովհետեւ կնոջ գլուխըն մարդն է, ինչպէս և եկեղեցու գլուխն է Քրիստոս» (Եփ. Ե. 23): «Թող զգաստացնեն հարսները, որ լինին սիրող իւրեանց փեսաները, երախաները, լինին անարատ և հնազանդ իւրեանց մարդոց» : «Աստուծոյ յատուկ պարզեն է համեստ կինն» (Սիր. ԻԶ. 17): «Շնորհքների շնորհքն է ամօթխած (պարկեցա) կինն» (Նոյն 22): «Ճրագլուխ կինն (մի թանկագին) պսակ է իւր մարդոց համար» (Առակ. ԺԲ. 4): «Խմաստուն կանայք շինեցին տներ. իսկ անզգամ (կանայք) կործանեցին իւրեանց ձեռքով» (Առ. Ժ. 1): «Շնորհակալ կինն (իւր մարդից շնորհակալ եղող) բարձրացնում է իւր մարդոյ փառքը» (Առ. Ժ. Ա. 16): Համեստ, աղնիւ և պարկեցատ տիկիններն երկարացնում են իւրեանց մարդոց կեանքը, իսկ անազնիւ, անհամեստ և անպարկեցատ տիկինայք կարծացնում են իւրեանց մարդոց կեանքի թելը և բարոյապէս սպանում: Վերջապէս կանանց և մարդոց աղնիւ կենցաղավարութիւնն, համերաշխ կենակցութիւնն, սէրն ու խաղաղու-

թիւնն, պարկեցտութիւնն ու ազնուութիւնն՝ սրբասէր կեանքն ու նիստ ու կացն կարող են լինել իւրեանց որդւոց և թուանց, օրիորդաց և հարանց համար կենդանի քարոզ, ազդու խրատ, պատկառելի պատկեր, օրինակելի տիպ և ընտիր վարուց և բարուց տիպար: Ընդհաւ կառակն արանց և կանանց անազնիւ կենցաղաբարութիւնն, խռովիսեթ կենակցութիւնն, ատելութիւնն ու արհամարհութիւնն, անպարկեցտութիւնն ու անազնուութիւնն, անսրբասէր կեանք և անվայել նիստն ու կացն կարող են ամենավատ ազդեցութիւն անել իւրեանց ստորագրելոց վերայ և աւելի չարագոյն օրինակների պատճառ դառնալ: Ա.Հաւասիկ սորտ համար է որ Ս. Գիրքն պատուիրում է. Կանայք՝ հնազանդ ենք+ Յեր բարդոց՝ ինչպէս Աստուծոյ. «Ա. ՞ո՞, «Երշիկ+ զիանայս Յեր»: Բաց յայսցանէ մեր Փրկիչ Յիսուս Քրիստոսի վերջին կտակն է. «Պատուիրան նոր տամ ձեզ, զի սիրեցէք զմիւմեանս, որպէս սիրեցի ես զձեզ, զի դուք սիրեցի զմիւմեանս» (Յով. Ժ. 34):

Բ. «Ուղիկե՛ր, հնագուշներ լվաց- ժնազաց Յերսոց, յա-  
մենապահներ՝ զի այս է հաջոյ ստուզէ Տեսան»:

Մարդիկ ունին շատ հոգեւոր ծնողներ,  
առաջինն է Հայը Աստված՝ «Հայը մեր՝ որ

յերկինս ես»։ Երկրորդ՝ մեր հոգեւոր հայրենս, ինչպէս են կաթուղիկոս, եպիսկոպոս, վարդապետ, քահանայ, կնքահայր, վարժապետ և վարչապետ (արուեստաւոր աշակերտաց նկատմամբ) և հոգեւոր ծնող մայր—Ա. առաջանուններուց ներքեւ ամեն զաւակաց ամենամօտ և ամենամեջ Երախտառըներն են իւրեանց հայրերն և մայրերն։ Փոխադարձ պարզութ և երառութ կան նաև որդւոց և ծնուցաց մէջ։

Ոչ մի առարկայ այնքան քաղցր և թանկաղին չէ ծնողաց համար՝ ինչպէս զաւականերն։ Զաւակաց—Պահայ և աղջիւ սիրոյն հետ չեն կարող համեմատուիլ ոչ արծաթ, ոչ ոսկի, ոչ հարստութիւն, ոչ կալուածք և ոչ ամենաթանկաղին ակունք, որոց ամենից էլ գերազանց են զաւակներն թէ արական լինին և թէ իգական։ Քանի քաղցր է որդի, որդի, պատահութիւն բառերն։ Թէպէս ծնողական սէրն հասարակ է և անբաններին, այս է անսասունեներն և թռչուններն էլ սիրում են իւրեանց ձագերը, և որոց վերայ ունին ծնողական գումար, ինաւք, հոգատարութիւն և սնուցանելու յասուկ սէր, սակայն անհուն տարբերութիւն կայ բանական մարդոյ և անբան կենդանեաց ծննդեան, սննդեան և մեծացնելու մէջ։ Չոքոտանի անասնոց ձագերն ծնաւ-

ծին պէս իսկոյն կանդնում են, ծծում իւրեանց մօր կաթը և մի աարուց յետոյ կամ վեց ամսից յետոյ՝ այլ ես կարօտութիւն կամ պէտք չունին իւրեանց մարց։ Նմանապէս թունոց ձագերին կերակրում են իւրեանց մայրերն համարեալ թէ 1—2 ամիս և այնուշենե ապրում են ձագերն ինքնագլուխ։ Բայց մարդն այսպէս չէ ամենեին, այլ չափազանց զժուար է մարդոյ ծնունդն, զժուար պահելն, զժուար մեծացնելն, զժուար կերակրելն, զժուար դաստիարակելն, կրթելն և ազնուացնելն, թողում ասել միւս հոգեւոր և մարմնաւոր ծանր պէտքերը։ Սուրբ Գիրքն, ի նկատի ունենալով ծնողաց և դաստիարակաց բաղմադիմի երախտիքները, պատուիրում է ասելով։ Ուրիշի, հնապահով Ելեւ Յեր Ժնովաց առն բանի մէջ, որովհետեւ շատ հաճելի և Ասպոնծոյ առաջ հնապահովութիւնն։

Հին Օրինաց մէջ Աստուած պատուիրած էր Մովսէսի ձեռքով Եւ պատուիրանում։ «Պատուիր քո հայրը և մայրը, որ քեզ համար բարի լինի և դու երկար ապրես» (Ելք. ի. 12 և ի. Օր. Ե. 13)։ Աստուծոյ ինչպէս բոլոր օրէնքներն, նոյնպէս այս պատուերն չիմնուած է, խղճանանքի բնութեան—օրինաց վերայ, թէ հոգեւոր և թէ մարմնաւոր որդիիք շատ երախտապարտ

Են իւրեանց հոգեոր և մարմնաւոր ծնողաց:  
Աւանդութեամբ ասում են, երբ արագիլ  
թռչունի մայրն պառաւում է և մնում բնի  
մշջ նստած, ձագերն մեծ խնամք են տանում  
իւրեանց մօր, կերակրում և պահպանում:

Նմանապէս ասում են ըստ աւանդու-  
թեան, որ Ս. Գրիգոր Լուսաւորիչն իւր ծնո-  
ղաց անշափի Երանիութեաց պրծնելու համար՝ շ-  
տէլու գնացել է երուսաղէմ:

Ս. Գրքի ներշնչեալ գրողներն առհասա-  
րուի պատուիրում են որդւոց հնաղանդ լի-  
նել ծնողաց և յարգել ու միսիթարած պա-  
հել մինչեւ նոցա մաշն: Աշաւասիկ.

« Քո բոլոր զօրութիւնից փառաւորիք քո  
հայրը և մի մոռանար քո մօր ցաւերը (եր-  
ձեր հօրից և մօրից) »: « Իւրաքանչիւրդ պէտք է վախնաք  
հօրից և մօրից » (Ղետաց. ԺԹ. 3):

« Որդեակ, պահպանիր քո հօր օրէնք-  
ները և մի մերժեր քո մօր խրատները »  
(Առակ. Զ. 20):

« Լոիր, որդեակ, քո հօր, որ քեզ ծնաւ  
և մի արհամարհէր քո մօր պառաւութիւնը »  
(ԽՊ. 22):

« Լոիր, որդեակ, քո հօր խրատին և մի  
մերժեր քո մօր պատուերները, որ քո գլու-  
8—9):

« Որդեակ, օգնական եղիր քո հօր ծե-  
րութեան և մի' արամիցնիր զնա » (Սիր. Գ. 14):

« Խորագէտ որդին հնաղանդ է իւր հօր,  
անհնաղանդ որդին կը կորչի » (Առ. ԺՊ. 1):

Սուրբ Գիրքն՝ իւրեանց ծնողները պա-  
տուղ զաւակաց համար նշանակած է Երկար  
կետն, օրինաւելիւն, գույս-նկան և ամեն տեսակ  
հոգեոր և մարմնաւոր բարիք: Իսկ ծնողները  
արհամարհող և անպատուղ և անխնամ թող-  
նող զաւակաց համար՝ սահմանած է ամեն,  
հայտաբնեն, անէծուն, կողմանաւ և սղանուննու-  
թինակ:

« Պատուեալ զհայր քո և զմայր, զի բարի  
լինիցի քեզ և երկայնակեաց լինիցիս ի վերայ  
երկրի»:

« Որդիք, հնաղանդ լերուք ծնողաց ձե-  
րոց ի Տէր, զի այն է արժան»:

« Հօր օրհնութիւնն հաստատում է որդւ-  
ոց տունը և մօր անէծքն քանդում է տան  
հիմունքը » (Սիր. Գ. 11):

« Որդիք որ անարգէ զհայր և մերժէ զմայր՝  
ամօթ կը և նախաս լիցի» (Առ. ԺԹ. 26):

« Խմաստուն որդին ուրախացնում է իւր  
հայրը. անփառ որդին արհամարհում է իւր  
մայրը» (Առ. ԺԵ. 20):

« Անզգամն անդոսնում է (պախարակում  
է) իւր հօր խրատը» (Առ. ԺԵ. 5):

«Անիծեալ լինի իւր հայրը և մայրը արհամարհողն» (Բ. Օք. իշ. 16):

«Ով որ հայհոյում է իւր հայրը՝ կը խաւարի (կանցնի) նորա լոյսն և նորա աչաց բիբերն իսուար կը տեսնեն» (Առ. ի. 20):

«Այն աչքը, որ արհամարհում է իւր հայրը և անարդում է իւր մօր պառաւուշթիւնը, կը խնն (աչքը գուրս կը հանեն) ձորիրի ագուաւներն և գէշ գէշ կը պատառեն նոյն աչքերը արծիւների ձագերն» (Առ. և. 17):

Երբ զաւակներն մեծանում են և լինում տղամարդ, նոցա հայրերն և մայրերն ծերանալով և պառաւելով կտրծես թէ նորից հարկաւոր են աւելի հա՛ֆ, ինամէ և պահպանութիւն:

Նոյն իսկ օրէնքներ գնող Յիսուս Քրիստոս Աստուածն անդամ, որովհեան մարդեղած էր մեզ նման, ամեն կերպով խոնարհ և հնագանդ էր իւր մարմնաւոր ծնողաց, ինչպէս վկայում է Պուկաս աւետարանիչն (Բ. 51):

Դ. Որի է տան մէջ հարկաւ դտնուում են և հարսներ, որ կարգուած են անդամոց թուզյն մէջ: Թէ արական և թէ իգական զաւակներ ամուսնանալուց յետոյ ունենում են երկու հոյը և երկու մայր, շատ եղայրներ և շատ քոյրեր: Օրինակի համար պահկուող երիտասարդների համար հայրեր են իւր ժնողն

և աներն, եղայրներ են իւրեանց հարազատ եղայրներն և իւրեանց հարսի եղայրներն, իւրեանց քոյրերն և կողջ քոյրերն, իւրեանց ծնող մայրերն և իւրեանց հարսների մայրերն: Այսպէս են և հարսանց համար: Հարսներն պարտական են իւրեանց հայր համարել իւրեանց պատրսունները (սկեսրայր), մայր՝ իւրեանց սկեսունները, եղայրներ՝ իւրեանց պատրէնները, քոյրեր՝ իւրեանց պատրէնները և պալէրը (իւրեանց մարդոց քոյրերն): Եւ որովհետեւ սորա ամենքն համարուում են գերդաստանի անդամներ, ուրեմն նոյնպէս պատրտած և իրաւունքով կապուած են միմեանց հետ: Հետեւապէս ամենքն ևս պարտաւոր են մեծ զգուշութեամբ կատարել իւրեանց պարտաւորութիւնները, որպէս զի իւրեանց բնակարաններում թագաւորէ ուր, խաղաղութիւն, «ընունիւն» և քաղցրագոյն կենակցութիւն:

Բացի վերևի գրածներից գերդաստանի մեջ գտնուում են նաև պատր և պատո, որ տների բուն նահապետներն են, որ տների շէնքն ու շնորհքն են, համն ու հոտն են, աղն ու վայելչութիւնն են: Այս, պապերն ու տատերն են տների հիմնագիրն, դատաւոր աշխատաւորներն, բազմամեաց փորձառու մըշակներն և գերդաստանների բուն արմատներն են: Տների միջի բոլոր անդամներն, այս է

որդիքն, հարսներն, թոռներն և ծոռներն  
աշխատելու են, որ ժառանգեն ծնողաց օրհն-  
նութիւնը և բնաւ պատճառ չտան; որ չանի-  
ծուին մեծերից. քանզի մեծերի օրհնութիւնն  
կանաչեցնում է չոր քարը, իսկ անէծքը չո-  
րացնում է կանաչը: Վերջապէս օրհնածն  
օրհնած է և անիծածն՝ անիծած: Սոյի փոքր  
որդի Քամն իւր անվայել արարմանց պատճառ-  
աւ անիծուեցաւ իւր հօրից, և այդ անէծքն  
ժառանգարար տարածուեցաւ շատ պորտերի  
վերայ որդւոց որդի և թոռանց թոռն, ինչ-  
պէս հաստատում է ինքն Աստուած՝ ասելով.  
«Ես եմ քո Տէր Աստուածն՝ նախանձոտ Աս-  
տուած, որ հասուցանում եմ հայրերի մեղ-  
քերը որդւոց՝ մինչեւ ինձ ատելի երեք և չորս  
սերունդ, և ողորմութիւն եմ անում իմ սի-  
րելիներին մինչեւ հազար սերունդ» (Ելք. ի.  
5—6):

Եւ ահա այսպէս նոյի անէծոն սերնդից  
սերունդ թափանցելով Քամի ցեղի վերայ, որը  
ջնջուեցաւ Մովսէս մարգարէի և Յեսու Նառ-  
եայի ձեռնով. այն, մեծաւ մասամբ ջնջուեցաւ  
Քամի ցեղն անէծքով։ Այս մեզ համար խիստ  
մեծ խրատ է և բաւական՝ մեզ դառնալոնեւու .

Ընդհակառակն Սեմն օրհնուեցաւ իւր  
հայր Նոյից իւր ծնողասէր գործով։ Այս  
օրհնութիւնն սերնդից սերունդ թափանցե-

լով հասաւ Արբահամ, Արբահամից Խամհակ  
որից՝ Յակովը, որից՝ Յուղայ, Դաւիթ, որի  
սերնդից ծնաւ Փրկիչն Յիսուս։ Ահա օրհ-  
նութեան պառղն։ «Ազն եկաւ (Յուղայի)  
Երկիրն, Բեթղեհեմից Եղիմելեք անուն մի  
մարդ իւր Նոոմի կնոջ և իւր որդւոց Հետ  
գնաց Մովարու աղարակն։ Այստեղ մեռաւ  
Եղիմելեք։ Նոոմի իւր Երկու որդւոց Հա-  
մար Երկու հարս առաւ Մովարացի աղջիկնե-  
րից։ Մեռան և իւր Երկու որդիքն։ Նոոմին  
դարձաւ իւր Քաղաքն Բեթղեհեմ, իւր Հետ  
գնացին և իւր հարսներն Որփա և Հոռթ:  
Նոոմին ասում է իւր Երկու հարսներին։ «Գնա-  
ցէք դարձէք ձեր հայրերի անելն . . .»։ Որ-  
փան դարձաւ իւր Հօր առան, իսկ Հոռթ  
չուրձաւ, այլ ասաց. Քեզ միայնակ չեմ թո-  
շուրձաւ, ուր որ կը գնաս, ևս էլ կը զամ, քո  
ժողովուրդն կը լինի իմ ժողովուրդ և քո  
Աստուածն՝ իմ Աստուած» (Հոռթ. Ա. Դ.):  
Հոռթն որովհեակ չուղեց իւր սդաւոր և  
արտմութեամբ լցուած սկեսուրը միայնակ  
թողուրդ այլ բաժաննուեցաւ իւր բոլոր աղ-  
գականներից և հայրենիքից՝ իւր պատաւ սկե-  
սուրը միմիթարելու նպատակաւ, Հոռթի այս  
բարի արարմունքն այնքան հաճելի եղաւ Աս-  
տուծոյ, մինչև անդամ Քրիստոսի ազգաբա-  
նութեան մէջ և առնուեցաւ և Հոռթի ա-

նունն, որի Ովբէթ որդին է Գաւիթ մարդարէի պապն:


Մի հարսն, ձանձրանալով իւր զառամեալ պատրունին ծառայելուց և պահպանելուց, ասում է իւր մարդոյն. «Ա. Ա. ևս չեմ կարող պահպանել քո հայրը, զի՞ր կողովի մէջ և տար այս ինչ անուն քարայրի (մաղարա) մէջ և ասա. «Հայր իմ, ահա քեզ համար հաց, ջուր և կերակուր և անկողին, ապրիլ այս տեղ, քեզ համար ինչ որ հարկաւոր է, ես կը բերեմ օրէցօր»: —Պատասխանում է հայրն որդուն. «Բարի է, բոյիդ մատաղ, դէ կողովը տար, քեզ հարկաւոր կը լինի»: Խակոյն զգաստանում է որդին և լալով ասում. «Հայր իմ, անիծում ես զիս այդ Քեզ հարկ իրշնի խօսքով. այսինքն ինչպէս ես քեզ այդ կողովով բերի այտեղ, այդ իսկ կողովով իմ որդին էլ զիս կը բերէ և կը թողու այս տեղ, կամենում էք այս անէծքը տալ ինձ»: Որդին, սասափկ զղացած, հայրը յետ է բերում տուն և մինչեւ մահը լաւ պահպանում: Սորա համար է ասում Սողոմոն. «Պսակ ծերոց՝ որդիք որդւոց, պարծանք որդւոց՝ հարք իւրեանց» (Առ. Ճ. Ե. 6): «Հաճեցայ բնակիլ առիւծի և վիշապի հետ, քան թէ բնակիլ չար կնոջ հետ» (Աիր. Ի. Ե. 23): Թող Հառան օրինակ լինի բոլոր հայ հարսների

համար, թող Հառանթի աղողութեանն, բարունին, ականանիւնն և հնապահութեանն աստուածահանց առաքինութեանց ուղեցոյց լինի ամեն հայտղի հարսների համար:

3182/1  
2004

Դ. «Հայրեն՝ մ' պարտաշնէ+ Յեւ արտինելը այլ կը լինեցէ+ Յեւ որդիները Ա. պատուածուն և ընկեննելը ուսացանելով» (Եփ. Զ. 4): Հայրերն և մայրերն փոխագարձ պարաքով կապուած են իւրեանց զաւակաց հետ: Քանի քաղցր, քանի սրտաշարժ և քանի գրաւիչ են հայր և հայր անուններն, որք մագնիսական զօրութեամբ իրենց են քաշում զաւակաց սրտելը: Նոքա աւելի լաւ կը հասկանան կաց զօրութիւնը, որք վայելած են հայրեն և այս զօրութիւնը անփոխարինելի չնորհըները: Հայրերն և մայրերն իւրեանց զաւակաց համար, բացի բնական և ֆիզիքական—մարմնաւոր— իննամքները և պէտքերը հոգալուց, պարտաւոր են մեծ հոգ և իննամք տանել և իւրեանց զաւակաց բարսյական, կը ծնական և ասպասած պալալական կը թութեանց համար, որպէս վկայում է Ա. Գիրքն պատուիրելով. «Կը լինեցէ+ Յեւ որդիները Ա. ստուծոյ խրասներով, օրէնքներով և պատուիրաններով»: Մարդն բոլոր կենդանեաց պապն է և նոցանից աարբերուում է բանական հոգեւուլ: Ամենից

2



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

նակարեոր է ուսմամբ և կրթութեամբ դաս-  
տիարակել մարդը և գերազանցել նորա բանա-  
հանո-նիւնը, կատարելագործել աստուածային  
և ընկերական կրթութեամբ նորա հաջին, աղ-  
նուացնել սրբու և մշակել օքուր, որպէս զի  
Աստուծոյ պատկեր մարդն փայլի հասարա-  
կութեան մէջ, եկեղեցու մէջ և մարդկու-  
թեան մէջ: Եթէ ծնողներն կամենում են  
նախանձելի զաւակներ թողուլ աշխարհի մէջ,  
պարտաւոր են տանել ամեն հոգ, խնամք և  
հարկ եղած պէտքերը և ըստ օրինի կրթել  
առաջ իւրեանց արական և իրական զաւակնե-  
րը: Գերդաստանի ծոցում մատակարաբած  
դաստիարակութիւնն, այս է հօր և մօր  
տուած կրթութիւնն, շատ և շատ մեծ նշա-  
նակութիւն ունի թէ տղայ և թէ աղջիկ զա-  
ւակաց համար ապագայում: Ծնողաց բարի  
վարքն ու բարքն, առաքինի նիսան ու  
կացն, չերմեռանդութիւնն ու աստուածապաշ-  
տութիւնն, խաղաղասիրութիւնն ու քաղա-  
քավարութիւնն, ազնուութիւնն ու համես-  
տութիւնն վենդանի ժարու և աղուս- խրտու  
զաւակաց բարոյական և նիւթական կրթու-  
թեան համար: Սուրբն Օգոստինոս ասում է,  
որ իւր աստուածապաշտութիւնը և ազնուու-  
թիւնը պարտական է իւր սիրելի մօր դաս-  
տիարակութեան: Սուրբ Լուսաւորչի ասպաւած-

ուաշտունիւնը և հայրապետական շնորհանելը  
պարտաւոր ենք իւր դայեակ և դաստիարակ  
ամիկին Սոփիային: Վերջապէս վորձն հաստա-  
տումէ, որ ամեն ընտիր հայրապետաներն, վարկ  
ժապետներն, մարտիրոսներն, նաշատակներն  
և սուրբերն դաստիարակուած են իւրեանց  
ծնողաց զրկում: Ահա այսպէս անսահման  
ազդեցութիւն ունին մայրական դաստիարա-  
կութիւնն և կրթիչ սէրն:

Հարկ է յայտնել նաև թէ ծնողաց վատ  
և անբարի վարքն ու բարքն, անհամեստ նիսան  
ու կացն, խոռվայոյզ կեանքն ու կենցաղափա-  
րութիւնն և անբարյական կենակցութիւնն  
ու ապրուսան ունին վարտիւն վոխուրունիւն  
իւրեանց զաւակաց նկատմամբ: Փոքրահասակ  
զաւակաց ուղեղներն կը նմանին կակուղ կը ն-  
քամնամի, որք իսկոյն վեր են առնում ծնո-  
ղաց արտաքին տպաւորութիւններն թէ բարի  
և թէ չար, թէ առաքինութիւն և թէ մո-  
լութիւն: Ինչպէս խոր արմատ են ձգում  
զաւակաց սրակերում՝ ծնողաց ազնիւ վարքն  
և բարքն և տալիս ապնիւ վարտոց և բարտոց  
պարունակ, նմանապէս խոր արմատ են ձգում  
զաւակաց սրակերում՝ ծնողաց անազնիւ և  
անառակ վարքն և բարքն և տալիս անապնիւ  
և անառակ վարտոց և բարտոց պատուզներ:

Ծնողներն խիստ զգուշանալու, են որ

իւրեանց որդիքն չամուսնանան օտարազգի և վատազգի օրիորդների հետ որովհետեւ օտարազգին անշուշտ օդապ է, օտար—տարբեր—<sup>Յնուորունիւամբ</sup>, տարբեր առաջունիւամբ և տարբեր ճաշակով։ Այս է պատճառն որ ասում էր Ուերեկան իւր Խաչակ ամուսնոյն։ « . . ձանձրացեալ է անձն իմ ի դստերաց որդւոց Քետայ. Եթէ առնուցու Յակովը կին ի դստերաց անտի Քետայ, ի դստերաց երկրիս այսորիկ, և ընդէր իցէ ինձ կեալ» (Ծնն. Իէ. 46)։ Անշերքելի փաստերն ապացուցանում են, որ օտարազգի հարսներն արհամարհում են իւրեանց սկեսուըները և սկեսրայրերը, տագերներ և տագրակիները և տների մէջ ձգում բաժանում և խռովութիւն, և անքախտութիւն, և թշուառութիւն։ Խմաստուն Սողոմոն կործանուեցաւ իւր օտարազգի կանանց ձեռքով։

Ծնողներն շատ զգուշանալու են, որ չո՛ և սահման պահպանեն ուայելու, խօնը և հագունելու մէջ, որպէս զի իւրեանց որդիքն, հարսներն, օրիորդներն և թոռներն ևս վարժուին վայելուչ չափէ և սահմանի. որպէս զի իւրեանց մեծերից չսովորեն հժանանիւն, անհարունիւն և շայունիւն, այլ սովորեն շահագունիւն, հարունիւն և համեստունիւն։ Փոքրութիւնից արմատացած ունակութիւնը մինչեւ գերեզման

մարդ չէ կարողանում հեռացնել իրանից թէ առաքինութիւն լինի և թէ մոլութիւն, ինչպէս ասում է առածն։ Փոքրութիւնից մտած ախար՝ հոգուն հետ կըբաժանուի մարմնից։

Ծնողներն միշտ զգաստ և արթուն լինելու են, որ իւրեանց որդիքն, հարսներն և աղջիկներն ընկեր չլինին, նիստ ու կաց չունենան վատ, անբարոյական և անառակ մարդոց, կանանց, հարսանց և օրիորդաց հետ։ Որովհետեւ վատ օրինակներն և վատ գործերն իրավայի նման խկոյն վարակում, պըշկում և ապականում են մարդը վասն զի մի վատ օրինակն հաղար վատ խօսքից աւելի ազգեցութիւն ունի մարդոց վերայ։

Ե. «Մաւանանէր, հնազանդ եղէ+ Յեր մարմառա-որ աւելընին՝ յեր սրածըն երկն-լածունիւամբ, դուռը-նիւամբ և մասմասունիւամբ՝ ինչպէս և Քրիստոնունիւն»։

Սըբազուն առաքեալն այս տեղ որոշում է և ծառաների ու աղախինների պարասւորութիւնները որպէս զի ամեն տան մէջ—ծառայ և աղախին եղած աներում—թագաւորէ խաղաղութիւն։ Ուր խաղաղութիւն կայ, այն տեղ է և Աստուած. վասն զի Աստուած ոչ եթէ խռովութեան Աստուած է, այլ խաղաղութեան Աստուած։

Ծառաներն և աղախիններն իրաւունք չունին ասել. «Աստուծած, զիս ի՞նչու ծառայ և աղախին ստեղծած ես: «Իսկ դու ով ես, մարդ, որ պատասխանի տաս Աստուծոյ, միթէ ասիցէ ստեղծուածն ցատեղծիչն՝ թէ ընդէր այդպէս արարեր» (Հա. Թ. 21): Այլ պէտք է, որ միշտ հնագանդ լինին իւրեանց տէրերին և տիկիններին. պէտք է, որ իրենք զիրենք համարեն տան անդամներից մին և իւրեանց տէրերի և տիկինների ծառայութիւնները Աստուծոյ ծառայութիւնն: Ծառաներն և աղախիններն պարտաւոր են վերջին ծայր հաւատարիմ լինիլ իւրեանց տէրերի տան, աղբանքներին, անսառւններին, նիւթականն և բարոյական ունեցածներին, անսուններին, պատիւններին, պարտաւոր են ամենայն զգուշութեամբ և սրբութեամբ ծառայել. ծառայել ոչ ակամայից, ոչ կեղծաւորութեամբ, ոչ իցոյցս մարդկան, այլ ծառայել սիրով և հաճութեամբ, ջերմեռանդութեամբ և անձնութրութեամբ՝ ինչպէս Աստուծոյ ծառայութիւն և ոչ իրեւ մարդոյ ծառայութիւն: Ծառաներն և աղախիններն, ինչ որ գործում են, պարտաւոր են աստուածավախ երկիւզածութեամբ գործել, որովհետեւ բացի իւրեանց նիւթական վարձքից, որ ստանում են իւրեանց տէրերից և տիկիններից, սաանալու են իւ-

թեանց ծառայութեան հապուցունը Աստուծուց. ըստ որում ծառայում են Քրիստոսին: Հապուցուն կախուած կը լինի իւրեանց ծառայութեան աւետակից—եթէ լաւ կը ծառային, լաւ վարձք կըստանան Քրիստոսից, իսկ եթէ վատ կը ծառայեն, պատիժ կը ստանան. որովհետեւ արդար է Տէրն և արդարութեամբ հատուցանում է ամեն մէկին իւրդործերի համեմատ:

Հայրենիք չունին ազնուանելիւնն, հաստատալունիւնն, համբէրունիւնն և հշարպառնիւնն: Ամեն հետամուտ եղողներն կարող են իւրացնել այդ բարձք առաքինութիւնները թէ հարուստ և թէ աղքատ, թէ ծառայթէ տէր: Ամեն աղքի մէջ, ամեն աեղ միշտ սիրելի եղած են այն ծառաներն և աղախիններն, որը ունեցած են ազնիւ, հաստատալիմ, համբէրուն համեստ և հշարպառներ բնաւորութիւն: Երանի այն ծառաներին և աղախիններին, որը ունին և ջանք են անում ունենալ այդ գերազանց յատկութիւնները: Աւելի լաւ է պարբառաւն և հարցադաշտ այդ առաքինութիւններով, քան թէ ամենաթանկագին ակունքներով ոսկով և արծաթով. որովհետեւ վերջիններս կարելի է գողանալ, կորցնել բայց այդ առաքինութիւնները անկարելի է գողանալ, կողոպտել և խլել մարդոց սրտերից:

Ամեն ազգի մէջ և ամեն տեղ պարէլի,  
ուստի և արհամարդելի եղած են անսպանիւ,  
անհաւասարիմ, անհամբեր, անհամեռ, արախու,  
իստելոյ, դուշ բամբառը ժոյլ և անողարիւշը  
ծառաներն և աղախիններն: Վայ այսպիսի  
ծառաներին և աղախիններին, վասն զի աշ-  
խարհիս մէջ ամենաթշուառ արարածներն են  
և մարդկութեան ամենից աղքատ մարդիկն, և  
միմնդամայն ատելի ինչպէս իւրեանց տէրե-  
րին, նոյնպէս և Աստուծոյ: Փրկիչն վերջին  
օրում վարձարութեան ժամանակ ասելու է  
Հաւատարիմ և աղնիւ ծառաներին և աղա-  
խիններին. «Աղնիւ ծառայ, բարի և Հաւա-  
տարիմ, որովհետեւ անտրտունջ կատարեցիր  
քո պարտաւորութիւնները ամենայն Հաւա-  
տարմութեամբ, մտիր քո Տիրոջ ուրախու-  
թեան մէջ»:

«Ծառաներ, ամեն պարագայում հնա-  
գանդ եղիք ձեր տէրերին երկիւղածութեամբ,  
ոչ միայն բարի և հեղ տէրերին՝ այլ և կա-  
մակրներին» (Ա. Պետ. Բ. 18.) «Ծառաներ,  
ինչ որ գործում էք, սրտի մտօք գործելու  
էք, իբրև Աստուծոյ զործ և ոչ իբրև մարդ-  
կան» (Կող. Գ. 23):

«Իմաստուն ծառան կը հանգարեցնէ  
իւր զայրացած ափրոջ բարկութիւնը» (Ա.Ա.  
Ժ. 14):

«Այն ծառան, որ կիմանայ իւր տիրոջ  
կամքը և չի պատրաստիլ նորա կամաց համե-  
մատ, շատ ծեծ կուտէ» (Ա.ուկ. Ժ.Բ. 47):

«Տեարը (աղաներ), իրաւունքներ շնոր-  
հեցէք ձեր ծառաներին, իմացած լինիք, որ  
դուք էլ Տէր ունեք երկնքումն» (Կող. Դ. 1):

«Զեղնից զբկուածն աղաղակում է, և  
հնձողների բողոքն հասաւ զօրութեանց Տի-  
րոջ ականջն» (Յակ. Ե. 4):

«Արժանի է մշակն վարձու իւրոյ» (Ա.  
(Տիմ. Ե. 18):

«Մինչեւ առաւօտ քեզ մօտ չմնայ վարձ-  
կանին վարձքն» (Պ.Ա. Ժ.Բ. 13):

Մաղթում եմ որ ամենարարի Աստուծուածն  
օրհնէ Հայոց պապերը և տատերը, Հայրերը  
և մայրերը, որդիքը և թոռները, Հարսները  
և օրիորդները և ամբողջ զերդաստունը, և  
շնորք տայ իւրաքանչիւր անդամի, որ կարո-  
ղանայ ճշտութեամբ կատարել իւր պարտաւո-  
րութիւնները և սիրով շաղկապուած ապրէ  
երկար և երջանիկ, առն:

ՔՐՈՋ Բ.

«Ոչ գետէք եթէ տաճար էք Աստուծոյ  
և Հոգի Աստուծոյ ընակեալ է ի ձեզ: Եթէ  
ոք զաճար Աստուծոյ ապականէ, ապակա-  
նեսցէ զնա Աստուած, զի տաճար Աստու-  
ծոյ սուրբ է, ոք էք դուք» (Ա. Կողն. Գ.  
16—17)

Աստուածութիւնն ունի շատ հրաշալի  
տաճարներ, որոյ մէջ փառաբանում է ան-  
ընդհատ:

Առաջինն է անդրանիկ Եկեղեցու տաճարն,  
այս է անթիւ Հրեշտակաց ընակութիւնն, ինչ-  
պէս ասում է առաքեալն «ի բիւրաւոր բա-  
նակս Հրեշտակաց և յեկեղեցն Անդրանիկաց»  
(Երլ. ԺԲ. 22—23):

Երրորդ տաճարն է Երևանի հրաշալարդ կա-  
ժարն, որի մէջ արեգակն, լուսինն, մոլորակ-  
ներ և ամբողջ համաստեղութիւնն միշտ օրհո-  
նում և փառաբանում են Տէրը իւրեանց լոյ-  
սով և անխախտ շըջաններով, ինչպէս զբու-  
ած է (Դան. Գ. 58—84):

Երրորդն է Տիեզերէք պահարն, որի մէջ միշտ  
օրհում են իւրեանց Ստեղծողը ամսկերն, այս  
և այն կողմերն շարժուելով, անձրեւ, ցող,  
ձիւն իջնելով, թռչուններն ծըլւըլալով, եր-  
գելով, հողմերն, գետիւաններն շնչելով, դե-

տերն և աղբիւրներն վազելով, կարկաչելով և  
ծովերն ու լճակներն ծփծփալով և ալեկո-  
ծումներով:

Չորրորդ տաճարն են ամբողջ ուղղափառ  
Քրիստոնէից վանքերն, եկեղեցիներն, անա-  
պատներն և մատուններն, որոց մէջ լինում են  
աղօթք, մաղթանք և պատարագ: Ահա այդ  
բոլոր տաճարների մասին ասում է Տէրն. «Եր-  
կինք աթոռ իմ են և երկիր պատուանդան ոտից  
իմոց» (Ես. ԿԶ. 1):

Հինգերրորդ տաճարն է ամեն մի ուղղա-  
փառ քրիստոնէայ մարդ՝ թէ արական լինի և  
թէ իգական: Այս կենդանի և անձահ տաճա-  
րի աղօթաւոր փառաբանիչն է, իւրաքանչիւ-  
րի հոգին, սուրբ սեղանն է «իրան», ինկոց ա-  
նուշահոտութիւնն է առ Աստուած եղած  
սրտագին զբացնաւելուն: Աստուածութիւնն  
հանգստանում է սուրբ սրտերի սեղանների  
վերայ և անձամբ լսում հոգիների մշտամունչ  
թախանձաներները, որք երկիւղածութեամբ նը-  
ուիրուում են իրան: Այս տաճարների մէջ է  
յղանում և ծնուռում ծշմարդ հաւատն, ան-  
խախտ յոյսն և անկեղծ սէրն դէպի Աստուա-  
ծութիւնն: Այս տաճարից առ Աստուած բար-  
ձրանում են ջերմեռանդ աղօթքներ, ջերմա-  
գին խնդրուածքներ և սրբանուեր զգացմունք-  
ներ:

Բայց այստեղ շատ և շատ զարմանալու հնգ Աստուծոյ մարդասիրութեան վերայ, որ բոլոր տաճարներից աւելի շատ է սիրում այս վերջին տաճարը—քրիստոնէից մարմնոյ տաճարը:— Որովհետեւ Աստուծոյ սահմանած (և մեզ անյայտ) մի օրում անպատճառ կը կործանուին Տիեզերքի բոլոր տաճարներն, բայց մարդն ոչ քանզի մի հոգին Տիեզերքից շատ և շատ գերազանց է Աստուծոյ համար քան թէ այդ տաճարներն, ինչպէս վկայում է փրկիչն ասելով. «Եթինու և Եթին կանցանեն»: որովհետեւ երկինք և երկիր ստեղծուած են Աստուծոյ խօսքով, իսկ մարդն ստեղծուած է Աստուծոյ ձեռքով. ամբողջ տիեզերքն մարդոյ համար, մարդուն՝ Աստուծոյ համար: Ահա այսպէս մարդս տաճար է Ս. Հոգուն: Ուր որ լինի Ս. Հոգին, այնտեղ կը լինի և Հայր Աստուծու և Որդին Աստուծու: (Ես և Հայր իմ) «առ նա եկեւցուք և օթեւանս առ նմա արտացուք» (Յով. Ժ. Գ. 23): «Խպաքէն գուք տաճար Աստուծոյ կենդանւոյ էք, որպէս և ասաց Աստուծու «թէ քնակեցաց ի նոսա» (Բ. Կորն. Զ. 16) և թէ «Զգիտէք թէ Աստուծոյ տաճար էք և Աստուծոյ Հոգին բնակած է ձեր մէջ» (Ա. Կորն. Գ. 11): Այս տաճարի մէջ է հանդստանում և մեր առած հարցուունիւնն—սըստնիւնն առ Է՞ս: «Երանի նոյս, որ սրտով սուրբ են, զի

նոքա կը տեսնեն զԱստուծու» (Մատ. Ե. 8): Սուրբ է Աստուծու. սուրբ լինելու է և Աստուծոյ բնակութեան տեղին, սուրբ լինելու են և մեր մարմնոյ տաճարներն: Այս այն մարդոց, որ աղջուում էն իւրեանց մարմնոյ բանարանը: Այսպիսի մարդիկ վէն կարութեան զԱստուծու: Այժմ հարք և եղանաք, մայրեր և քոյրեր, լաւ լսեցէք Յիսուս Քրիստոս մատաւ Երուսաղէմի տաճարն, տեսաւ այն տեղ Աստուծոյ տան մէջ անվայել սեղաններ, աթոռներ, թըռչուններ և անսասուններ, այլևս չկարողացաւ համբերել: Այլ շինեց չուանեայ խարազան և սասափիկ բարկութեամբ ծեծելով տաճարից դուրս հալածեց ծախող և առնող մարդկանց և կործանելով սեղանները և աթոռները, ասաց. «գրուած է տուն իմ տուն աղօթից կոչեսցի, և դուք արարիք զդա այրս աւագակաց»<sup>4</sup> (Մատ. ԻՄ. 12—13. Մար. Ժ. Ա. 12—13. Մար. Ժ. Ա. 11):

1 Սողոմոնի շնած Տաճարի մասին Աստուծուած ասած էր. «Նոյց (Հրէեց) զոհեցն, ողջակէզներն և նուէրներն ընդունելի կը լինին իմ սեղանի վերայ, որովհետեւ աղօթքի տուն կը կոչուի իմ տունն ամեն հեթանոսաց համար» (Ես. ԶԶ. 7): Մի և նոյն Աստուծու, յետոյ տեսնելով նոյն Տաճարի անպատուրիւնը, կողոպութ աւագակութեան հասած, ասում է. «Միթէ աւագակաց քարայր եղաւ իմ այդ տունն, որի վերայ կոչուած է իմ անունն» (Երեմ. Ե. 11):

15—17. Յով. թ. 14—16): Յիսուս Քրիստոս  
 (որ հաստատ գուշակած էր թէ 67 տարուց  
 յետոյ կործանուելու էր այն տաճարն) եթէ  
 այն աստիճան նախանձախնդիր էր կործանու-  
 ելի տաճարի սբրութեանն, որչափ ևս տեղի  
 նախանձախնդիր է մեր մարմնոյ տաճարների  
 սբրութեան և մաքրութեան համար: Խնչպէս  
 էր կարծում: Իթէ փրկիչն մանէ մեր մարմնոյ  
 տաճարների մէջ, միթէ այնտեղ չդիտէր Ս.ս-  
 տուծոյ ներկայութեան և բնակութեան ան-  
 վայել խորհուցնէր և ժառանգունելը: Հպար-  
 տութեան, ամբարտաւանութեան, չար նախան-  
 ձի, անտեղի բարկութեան, մահացու ծուլու-  
 թեան աելաննէր: աղահութեան, որկրամոլու-  
 թեան, արբեցութեան, հայհոյութեան, գողու-  
 թեան, յափշակութեան, մատնութեան, ա-  
 նուանարկութեան անուննէր: բարօյապէս մար-  
 դասպանութեան, անսանական ցանկութեանց,  
 անբարյական կեանքի, հոգեկորուսա մոլու-  
 թեանց և ուրիշ անթիւ և անհամար մեղաց  
 աելանննէր և անուննէր: Այս ամենը տեսնող Յի-  
 սուս Քրիստոս միթէ մեղ չյանդիմանէր ասե-  
 լով: Էմ գունն աղջնուի գունն է: և դու+ այդ  
 ոու-նէ գուննը իսխեցի+ ա-աղջնուց դարսցի (մա-  
 զարպի): միթէ խարազանով գուրս չհալածէր  
 այդ անտառական և նունական մոլութիւնները:  
 Սորա համար է ասում: Պօղոս առաքեալն այս

սարսափելի խօսքը: Ենէ մէն իտուականէ Ո.սպո-  
 նոյ դաճարը, Աստուած էլ իտուականէ զնա: ո-  
 րովնեալ Ս.սպո-ծոյ դաճարն առ-ըն է: որ է+ դու+:  
 Այս, այս տաճարն — մեր մարմնոյ տաճար-  
 ներն — սրբուած է աւազանին ջրով յանուն  
 Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, մկրատուելով  
 և լուսու-լուս և սրբալոյս միւռոնաւ օժու-լուս և  
 հաղորդութեամբ Յիսուսի Քրիստոսի կենարար  
 մարմնոյն և արեան: Սորա համար էլ ասում  
 է նոյն առաքեալն: Յէր անջանց առէնն չէ+. ո-  
 րովնեալ գնուլ գնուուծ է+. գուուուուց յէ+ Ա.ս-  
 պուուծ յէր մարմնուլ և հուսուլ որ Ա.սպո-ծուց  
 է: Պօղոս սրբազն առաքեալն, կամմալով  
 յուշ ածել մեզ Քրիստոսի մեր վերայ ունե-  
 ցած անփոխարինելի երախափքը, վճռաբար ա-  
 սում է. դու+ յէր անջելն առէնն չէ+. յէր ան-  
 յելն առէնն Յիսուս Քրիստոսն է, որովնեալ դու+  
 գնուուծ է+ գնուլ: Պետրոս ո. առաքեալն աւե-  
 լի պարզ է խօսում՝ ասելով: «իմացած լինիք,  
 որ դուք փրկուած էք ձեր հայրենի ունայն  
 գնացքից» ոչ ապականացու արծաթեղէններով  
 և ուկեղէններով այլ Քրիստոսի պատուական  
 արիւնով, ինչպէս անբիծ և անարատ գառին»  
 (Ա. Ղետ. Ս. 18):

Քանի որ մենք մեր անձանց ակրն չենք,  
 քանի որ Փրկիչն իւր աստուածախառն մարմինը  
 խաչելով և պատուական արիւնը թափելով

գնած է զմեղ սատանայի գերութիւնից, հնար  
եղածին չափ աշխատենք մաքուր պահել մեր  
մարմնոյ տաճարները։ Աշխատենք որ աստուա-  
ծավայել լինին մեր սրաերն իրրեւ Տիրոջ  
բնակարան։ Աղօթենք ներսէս Շնորհալու հետ  
ասելով. «Նորոգող հնութեանց, նորոգեալ և  
զիս, նորոգ զարդարեալ» և Դաւիթ մարդարէի  
հետ թախանձելով ասենք. «սիրա սուրբ հաս-  
տառական յիս, Աստուած, և հոգի ուղիղ նորո-  
գեալ ի փորի իմում։ Մի ընկենուր զիս, Տէր,  
յերեսաց Քոց և զշոգի Քո սուրբ մի հաներ  
յինէն»։ Տէր Յիսուս Քրիստոս, ամէն տեսակ  
մեղքերից և մոլութիւններից սուրբ պահիր քո  
կենդանի տաճարները։ ամէն։



ՔՐԻՍՏ. Թ.

«Նախանձեցուցանեմ զձեղ ի նա-  
խանձն Աստուծոյ, զի խօսեցայ զձեղ  
առն միում, իբրև զկոյս մի սուրբ՝  
յանդիման կացուցանել Քրիստոսի  
Քայլ երկնչիմ, գուցէ որպէս օձն խա-  
քեաց զեւայ խորամանկութեամբն իւ-  
րով, ապականեսցին միտք ձեր ի միա-  
մտութենէն՝ որի Քրիստոս (Բ. Կոքն.  
ԺԱ. 2—3):

Նախանձեցում եմ ձեղ Աստուծոյ նա-  
խանձով, որովհետեւ ձեղ նշանել եմ մի մար-  
դոյ, ինչպէս մի սուրբ կոյս կանգնեցնել Քրիս-  
տոսի զիմացն։ Քայլ վախում եմ գուցէ ինչ-  
պէս օձն իւր կորամանկութեամբ խարեց  
եւան, կապականուին ձեր միտքն Քրիստոսի  
վերայ ունեցած միամուռթիւնից։

Նախանձն երկու տեսակ է. առ նախանձ  
և բարձր նախանձ։ Չար է այն նախանձն, որով  
չետեւում ենք այլոց չար գործերին. օրինակ  
Բաղդասարն կերաւ աղքատների փողերը, ես էլ  
ուտեմ. Բաղդասարն գողացաւ հարեանի ոչխա-  
րը, ես էլ գողանամ. այս մասին պատուիրում  
է Դաւիթ մարդարէն։ «Մի նախանձիր նոցա  
վերայ, որք գործում են անօրէնութիւն։»

Բարի է այն նախանձն, որով Հետեւում  
ենք բարի մարդոց բարի գործերին և մենք էլ  
գործում ենք բարի գործեր. օրինակ Հայոց  
Աշոտ—ողորմած թագաւորն իւր ձեռքով էր  
կերակրում աղքատները, ես էլ իմ կարու-  
զութեան չափով կերակրեմ աղքատներ. այս  
ինչ օրիորդն խիստ ապնի, համեսու, պարհելու,  
ամսինաժ և խոնացն է. ես էլ լինիմ նորա  
նման աղնիւ, համեսու, պարկեշու, ամօթխած  
և խոնարհ. այս պատճառաւ պատուիրում է  
Պօղոս սրբազն առաքեալն «նախանձաւոր լե-  
ռուք գործոց բարեաց»—այս է՝ նախանձաւոր  
եղէք բարի գործերին և ոչ թէ չար գործե-  
րին:

Առաքեալն—նախանձաւոր պատճառ պատ-  
ճառն Աստուծոյ ասելով—կամենում է ասել,  
վառուեցէք Աստուծոյ սուրբ նախանձով. վա-  
ռուեցէք Աստուծոյ ս. սիրոյ անկեզ կրակով,  
վառուեցէք չհամբերել կրօնի դէմ, դաւանու-  
թեան, Եկեղեցու, սրբութեան և կուսու-  
թեան դէմ եղած անկարգութեանց և մա-  
հու չափ պատերազմել չարերի հետ: Այսպի-  
սի ս. նախանձով վառուած էր ենօք, որ փո-  
խեցաւ մարմնով զբախտն (Ծննդ. Ե. 24),  
Փենհէս (Թւոց ԻԵ. 11—15), Դաւիթ մար-  
գարէ (Ա. Թագ. Ժէ, 32) և նախանձայոյզն  
եղիւա, որ պատասխանեց Աստուծոյ. «Նախան-

Յեցայ զնախանձ Տետրան Ամենակալի, զի թողին  
դիեզ որդիքն խարայէլի, զսեղանս Քո կործա-  
նեցին և զմարդարէս Քո կոտորեցին սրով  
(Գ. Թագ. ԺԹ. 9—10): Սաստիկ նախան-  
ձախնդիր էին Կորնթայիք եկեղեցու պայ-  
ծառութեան և կարգապահութեան և սաս-  
տիկ հակառակ անկարգութեան (Ա. Կոր. ԺԳ.  
12): Նախանձախնդիր էր Աստուծոյ տան Տաճա-  
րի մաքրութեան ու սրբութեան համար նոյն  
ինքն Յիսուս Քրիստոս, որ խարազանով հալածեց  
Տաճարից անվայել իրերը, ինչպէս տեսանք: Ա-  
ռաքեալն արծարծում, վառում է և մեր  
մէջ այդպիսի նախանձայոյզ ողի և աստուած-  
սիրութեան կրակ, սաելով. «Նախանձեցա-  
նէմ պէտք է նախանձն Աստուծոյ, ով խօսեցայ  
պէտք առն միում, իւրլա զիսոյ մը սուրբն:»

Զօր օրինակ կայ Տայհնաւոր նշանախօսու-  
թիւն, նոյնպէս կայ և հոգեւոր նշանախօսու-  
թիւն. Եթէ կայ մարմնաւոր կուսութիւն, կայ  
և հոգեւոր կուսութիւն: Մարմնաւոր նշանա-  
խօսութեան և հարսանեաց մասին արդէն զի-  
տէք. խօսինք ուրեմն միայն հոգեւորի մասին:

Սուրբ Գիրքն սովորութիւն ունի Քրիս-  
տոսի աստուածութեան հետ միացող ժողո-  
վուրդը անուանել Դուռասով Ալոնի (Ալոնի աղ-  
ջիկ կամ օրիորդ) Նշանախօսութալ հարսն անարապ,  
հարսն Քրիստոսի, Դլոյ Երինից և այլն. ինչպէս է

« Զքեզ կը նշանեմ ինձ ինչպէս յաւիտենական՝  
նշանած՝ կը նշանեմ քեզ ինձ արդարութեամբ  
և իրաւունքով» ասում է Տէր (Ավա. Բ. 19—20):  
«Աւրախ լեր յոյժ դուռապր Սիոնիկ» (Զաւ-  
քար. Թ. 9):

«Խօսեցայ զձեզ առն միում...»  
«Տարցին թագաւորի հուասնիզ զհեանորա»  
(Ասդ. ԽԳ. 15):

«Արհամարհեաց զքեզ, ոյս դուսար Սիոնիկ» (Եա. Ա. Ա. 22):

«Կացցէ դշնոյ ընդ աջմէ քումիլ» (Ասդ.  
ԽԳ. 10):

«Ար ունի հայտն, նա է չեւացն» (Յով.  
Գ. 29):

«Աւրախ լեր սուրբ եկեղեցի, քանզի  
Քրիստոս արքայն երկնից այսօր սրակեաց զքեզ  
խաչին իւրով.... Աւրախ լեր հարսն անարատ-  
անքնին քո խորհրդով» (Շար.): Առոք Գիրքն  
Եկեղեցու Քրիստոսի հետ միանալը անուա-  
նում է, անուանութիւն. «Քրիստոս սիրեց եկե-  
ղեցին (Քրիստոնեայ ժողովուրդ) և մատնեց  
իւր անձը նորա համար. որ աւագանին խօս-  
քի արրութեամբ որրէ, նոյն եկեղեցին, որ ինքն  
իւր դիմացն կանդնեցնէ փառաւոր եկեղեցին»  
որպէս զի չունենայ մի արատ կամ աղաեղու-  
թիւն... այլ լինի սուրբ և տնարատ....:  
«Ամսւանրութեան խորհուրդն մեծ խոր-

հուրդ է, բայց ես ասում եմ Քրիստոսի  
և եկեղեցու միւնթեան մասին, (Եփ. Ե.  
25—32):

Այժմ որովհետեւ ամենքս էլ հոգեւորա-  
պէս նշանած ենք իրեկ հարսնացու Քրիս-  
տոսին, պարաւոր ենք միշտ ի նկատի ունե-  
նալ—աչքի առաջ ունենալ—նշանուած կու-  
սի վիճակի: Նշանուած կոյս աղջիկներն գի-  
շեր յերեկ միշտ զգուշանում են, որ առ-Են  
պահեն իւրեանց թանկարգին կոսութիւնը մին-  
չեւ իւրեանց պատկուելն: Միշտ արթուն,  
միշտ զգաստ, միշտ աշալուրջ են մնում, որ  
պարզերես լինին, որ փորձանքի չհանդիպեն և  
ապա մնան ամօթալի: Կուսութիւնը խախ-  
տուած (ամուսնանալուց առաջ) քանի քանի  
օրիորդներ վերջին ծայր նշանաւ եղած են,  
վերջին ծայր ացհամացհաւած, անելին, աճօնա-  
հար, անպատճ և անպատճան եղած են անեն  
կողմից: Արդ՝ եթէ մարմնաւոր կուսութեան  
խախտութիւն այսպէս է, հոգեւոր կուսութեան  
խախտութիւն ի՞նչ տեսակ պատիժների կեն-  
թարկութիւն: Ի՞նչ է անեն մարդոյ կուսութիւնն.  
— Աւզգափառ դաւանութիւն առ ամենասուրբ  
երրորդութիւնն Հայր, Որդի և ամենասուրբ  
Հոգի. Ճշմարիտ հաւատուց յայս և ոչ և անխախտ  
+ չիսուսնեանթիւնն: Այս ամենը իւրեանց պարա-  
գաներով սրբութեամբ պահելով, մենք ամեն

Հոգւով և մարմնով անբաժան միացած կը լինինք միմիայն Քրիստոսի հետ; Մեր ամբողջ սէրը՝ իբրև նշանուած՝ հաստատած կը լինինք Քրիստոսի վերայ՝ ինչպէս աստուածային փեսացուի վերայ: «Փեսայն ցհարան առէ ... զի՞ր զիս իբրև զինիք ի սրտի քում և իբրև զմատանի յաջոյ ձեռին քո, զի բուռն է իբրև զմահ սէր, և խիստ՝ իբրև զգժոխս նախանձ թուիչք նորա իբրև զթռիչս բոցոյ հրոյ: Զուրք բազումք ոչ կարասցեն զսէր շիջուցանել» (Երգ Երգոց Բ. 6—7): Մարմնաւոր կուսանք իւրեանց անհաւասարմութեամբ զրկուում են իւրեանց փեսացուներից միայն մարմնով. իսկ հոգեւոր նշանուածներն իւրեանց անհաւատարմութեամբ զրկուում են Քրիստոսի երեսից թէ մարմնով և թէ հոգւով:

Բայց երկնշէմ, դու—յէ սրալէս օչն խաբեաց զեւայ խորամաններութեամբն իւրան, առականնեացին միութ յեր: Այս խօսքով սրբազան առաքեալն յայտնում է մեզ իւր սրտի խորին ցաւը, ցաւելի երկիւզը, օձի—սատանայի խորամաննեկութիւնը, Եւայի խարուելու ախուր յիշատակը և մեր մոլքի անհաստատ դրութիւնը: Իրաւունք ունի առաքեալն յայտնել ցաւ, կառակժ, Երիեւլ և վշարի հին յիշատակ. վասն զի սիստական է մարդն և շուտ խաբուող: Բայց բնաւ վհատելու չէ, որովհետեւ մենք ունինք

այնպիսի կենադանի օրինակներ, որ կարող են ներշնչել մեզ անվեհեր արիութիւն, երկաթեայ կամք, անխախտ միտք և անպղտոր սիրա: Մեզ համար կենդանի օրինակ է Յիսուս Քրիստոս, որ փշրեց Եւան խարող օձի—սատանայի ձեռնարկութիւնները երեք փորձութեանց մէջ եւ: Մեզ համար խորին զգուշութեան օրինակ է Ս. Աստուածածին, որ խակոյն և եթշհաւատաց Գարբիէլ Հրեշտակապետի աւետամնը<sup>2</sup> և Պօղոս առաքեալն, որ ասում էր. «Ս.րդ՝ ո՞վ մեկնեցէ զմեղ ի սիրոյն Քրիստոսի, նեղութիւնն, թէ անձկութիւնն, թէ հալածանք, թէ սո՞վ, թէ մերկութիւնն, թէ վիշտ, թէ սուր...: Այլ յայսմ ամենայնի առաւել յաղթեմք նովաւ, որ սիրեացն զմեղ»<sup>3</sup>: Քրիստոսի վերայ ունեցած մամեդ հաւաքից և պղտոր զաւանութիւնից առականացն Ա.րիոս, Մակեդոն, Նեստոր և ուրիշ հերձուածողների մտքերն: Ա.հա այսպէս առականուած մաքերով, ուշաբնուած դաւանութեամբ և թերահաւատութեամբ են մոլորում միամիտ մարդիկ, որից զգուշացնում է մեզ Պօղոս ինչպէս հայր:

Ա.րդ՝ երջանիկ ենք ամենքս, որ ունինք

1. Աստթ. Դ. 1—11. Ղուկ. Դ. 1—13.

2. Ղուկ. Ա. 26—38.

3. Հռով. Ը. 31—39.

Քրիստոսի նման վեսացու. Երջանկագոյն կը լինինք, եթէ ամենքս ել զգաստ, արթուն և սուրբ կուսի նման աշխատենք հաճոյանալՔրիստոսի: Վասուինք միշտ Աստուծոյ նախանձով և անդադար աղօթենք, որ մեր ամենակարող փեսացու Յիսուս Քրիստոս անարատ և անբիծ պահէ մեզ ինչպէս մի սուրբ կոյս, և վերաջին օրում Հինգ իմաստուն կուռանաց հետարժանանանք մեր Երինային վեսայի հարսանեաց առագտստին: Ա. Ա.:

### ՔՐԻՍՏՈՆ Փ.

«Մանուկ ծնաւ մեզ, որդի տուաւ,  
որոյ եշխանութիւն իւը եղե և վերայ  
ուսոց եւքոց, և անուն կոչեցաւ նմա՝  
Հրեշտակ մեծի լրորհըդոյ, սքանչելի  
խորհրդակից, Աստուած, Հղոր, Իշխան,  
հայր հանդերձելոյ աշխարհն» (Խո.  
Թ. 6):

Աստուած արդէն կանխաւ խոստացած էր նախահարց և նախամարց պարզեել չի ժլու-  
թը ջախջախող զաւակ: Աստուած միենոյնը  
կը կնում է Արքահամին՝ ասելով. «Ե զատով  
ուու՞ օրինեսցին ամենայն աղութ Երիշ» (Գործ. Գ.  
25): Այս զաւակը Յակովը նահապեան ա-

նուանում է Ալեքանա-Ծիւն հենանուաց (Ծնն. Խթ.  
10), Մովսէս անուանում է Մաքարէ (Բ. Օր. Ժ. 15). Դաւիթ՝ Քահանայ (Սաղ. ՃԹ. 4). Սոզումն՝ Որդի Սաքո-ծոյ (Խմաստ. Բ. 13). Եսայի Մանուկ և Որդի (Ես. Թ. 6). Միքիան՝ Կիլան (Միք. Ե. 2), Մաղաքիան՝ Հյեղաքակ ու-իոնի (Սաղ. Գ. 1). Երեմիա՝ Տէր Քրէպոս (Ողբ. Դ.  
20). Զաքարիան՝ Թագառոսը (Թ. 9):

Քրիստոսի ծննդից առաջ մարդկութիւնն խիստ տիսուր զիճակի մէջ էր: Թէ՛ Հրէից և թէ՛ Հեթանոսաց բոլոր ծալքերում տիրում էր աղա-  
կանունիւն և անէպարտականունիւն: Այդ զի-  
ճակը տեսնող Եսայի մարդարէն (Ա. 5—6) աղաղակում էր. «Ամենայն գլուխ ի ցաւս և  
ամենայն սիրա ի արտմութիւն. յոսից մինչե  
ի գլուխ չիք ի նմա առողջութիւն ... չիք  
սպեղանի ի վերայ դնել, ոչ ձեթ և ոչ պա-  
տանս:» Հեթանոսաց կողմից Պղատոն ասում  
էր. «Մինչե որ մէկն չիջնէ Երկնքից, մարդ-  
կութեան ուղղուիլն անհնար է» և թէ՛ «Ան-  
հնար էր մարդոյ գտնել զիստուած, նամա-  
նաւանդ գտնելուց յետոյ ծանօթացնել ամեն  
մարդոյ:» Ակրգիլոս հասած էր համարում  
մարդկութեան փրկութեան գարն: Ահա այդ-  
պիսի մի տիսուր ժամանակում գողցես աւե-  
տում էր Եսայի մարդարէն (Ե. 14). «Ահա  
կը յղանայ կոյսն և կը ծնանի որդի և նորա

անունը կը կոչեն Եմմանուէլ—այս է՝ Աստուած  
մել հետ է:» Խսկ յետոյ ասում է. «Մանուէ  
ժնաւ մեզ որդի պատաս մեզ:»

Մեր փրկիչն ունի երկու ծնունդ. Առն  
ծնած է Հօր Աստուածոյ էութիւնից առանց  
մօր անժամանակաղին և անմարմին և մեզ հո-  
ղեղինայս անհասանելի և անիմանալի ծննդեամբ:  
Բ. առանց մարմնաւոր հօր՝ մարմնով ծնած է  
ժամանակաւ կոյս մօրից—Ս. Մարիամ՝ Աս-  
տուածածնից. ինչպէս երգում է Նարականն.  
«Զանայր ծնեալն յառաջնում, ծնար անհայր  
յերկրորդին:» Զոր օրինակ մարդկային արկար  
հոգաց հասողութիւնից անիմանալի, անժառանելի,  
անժանելի է Միածին Որդու առաջին ծնունդն,  
նոյնպէս անհասանելի է մարդկային սահմա-  
նափակ մաքին Նորա Երիտրի ծնունդն: Միայն  
հաւատում ենք ի բոլոր սրտէ և խոստվա-  
նում ս. Գրոց վկայութեամբ Երկու ծնունդն  
էլ: Խոսինը միայն երկրորդ ծննդեան մասին:

Ա. Մանուէլ ժնաւ մեզ որդի պատաս մեզ.  
(Մեզ համար մանուկ ծնաւ, մեզ համար որ-  
դի տրուեցաւ): Հոռմայեցւոց Օգոստոս կայ-  
սեր հրամանաւ սկսեցին աշխարհագիր անել՝  
նորա ամբողջ հպատակների շնչարդութիւնը  
գրել: Իւրաքանչիւր արական և իգական մարդ  
պարտաւորուած էր գտնուիլ իւր նահապեափ  
երկրում և գրուիլ իւր ցեղի տումարում:

Յովսէփ և Մարիամ Ս. Կոյսն Յակովը Նա-  
հապեափ Յուդա որդու ցեղիցն էին և Դաւիթ  
մարգարէի սերնդիցն: Այս պատճառաւ Նա-  
դարէթից Բեթղեհէմ գնացին Յովսէփ և  
Ս. Կոյսն մանելու ի շարս իւրեանց տոհմին:  
Արդէն հասած էր ժամն, որ Փրկիչն ծնուեր  
Ս. Կուսից. աշխարհագրի մէջ մանելու համար  
Յուդայի տոհմից եկածներով լցուած էին Բեթ-  
ղեհէմի բոլոր տուներն և իջևաններն. բնա-  
կարան չգտնուելու պատճառաւ դիմեցին այն  
քարայրն (մարազյ) որ անասնոց գոմ էր՝  
Բեթղեհէմի ստորատում: որի մէջ ծնաւ Փրկիչն  
որը փաթաթելով մայրն դրաւ մարի մէջն:

Աննկարագրելի՛ զարմանք և անսահման  
խոնարհութիւն. տիեզերքի Ստեղծողին ծնա-  
նելու տեղ չեն տալիս մարդիկ: ամենքին Ս. բ-  
քայութիւն շնորհողն ծնուում է քարայր  
գոմում և Անուաց հրեշտակաց վերայ Բաղ-  
մողն քազմում է անասնոց մսրում—ախոռում:

Բայց ծնուած բոպէից սկսեալ երկինք և  
երկիր խոսառանեցին, որ նորածին Մանուկն  
է աշխարհի Փրկիչն, որ նա է երկնքի և երկ-  
րիս մէջ հաւաքունիւն և խաղաղունիւն բերող  
միակ Միջնորդն: Հովհեներն Բեթղեհէմի ա-  
րեւելեան ստորատում պահում էին իւրեանց  
հօսերը: Կէս գիշերին Տիրոջ հրեշտակն երե-  
ւեցաւ հովիւներին, և Տիրոջ փառքն ծագե-

ցաւ նոյս վերայ և շատ վախեցինք Եւ պսում  
է նոյս հրեշտակն. Մի վախենաք որովհետեւ  
ահաւասիկ աւետարանում եմ ձեզ (աչքա-  
լոյս եմ տալիս ձեզ) մեծ ուրախութիւն որ  
վերաբերում է ամբողջ մարդկութեան. որով  
հետեւ այսօր ձեզ համար ծնաւ Փրկիչ, որ է  
Օծեալ Տէր Դաւթի քաղաքում — Բեթղեհե-  
մում: Եւ յանկարծ տեսնուեցան երկնաւոր  
զօրաց — հրեշտակաց — բարբեթիւն, որը օրհ-  
նում էին զԱստուած և ասում: «Փառք ի  
բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն  
ի մարդիկ հաճութիւնն»: Հովիւներն շուտով  
եկին քարայրն և տեսան Մարիամը, Յովսէփը  
և Մանուկը գրուած մնի մէջ: Դարձան հո-  
վիւները վառաւորում եին զԱստուած և  
օրհնում: Առանձին աստղի առաջնորդու-  
թեամբ եկին Բեթղեհեմ և իմաստուն մոգեր,  
ներս մտան, տեսան Մանուկը իւր մօր Մա-  
րիամի հետ միասին, և անկանելով երկրպա-  
գութիւն արին նրան և բանալով իւրեանց  
գանձերը՝ նուիրեցին Մանիան ընծաներ — ուկի,  
կնորոշ և զնուառ: Խորհրդաւոր ընծաներ, ու-  
կին՝ իրեւ նահաւով, կողրուկն՝ իրեւ անու-  
շահուս խունկ Աստուծոյ և զմուռսն՝ իրեւ  
նորդոյ ի նշան զմասելու: Դաւիթ մարդարէն  
ա. Հոգւով իմանալով ասած էր Տոհմէն մաօխն.  
«Փազաւոր Արաբայ և Մարայ պատարագս

բերցեն նմա: Երկիրպագցեն Նմա ամենայն  
թագաւորք երկիր և ամենայն ազոք ծառայեւ-  
ցեն Նմա. (Սաղ. ձԱ. 16—17):

Թղթատուելուց յեաոյ կոչուեցաւ Յիսուս<sup>4</sup>  
և Տաճարում ընդունուեցաւ Սիմէօն ծերու-  
նուց, որ և գգուելով գաւանեց զՄանուկը  
Աստուած, Հեթանոսաց լոյս և Խորայէլի Վասու-  
թիւնուամբ Յորդանան գետում, ջախ-  
ջախեց հակառակորդ սատանայի զլուխը և  
Զնջեց Ադամայ ձեռագիրը (Կող. Բ. 13—14):  
Ահա այսպէս կտարեց Աստուած իւր խոս-  
տումք պարգևել Նախահօր օճի զլուխը ջախ-  
ջախող զաւակ: Այսպէս կտարուեցաւ և  
Աստուծոյ այն խօսքն թէ՝ «Ահա Ադամ եղեւ  
իրը և զմի ի մէնջ» — այտէ Ս. Երրորդութիւնից  
մի անձն եղաւ Ազատի պէս և Ազամ եղաւ  
Ս. Երրորդութեան մի անձին պէս: Ահաւարիկ  
այսպէս կտարուեցաւ Ակամայ ցանկութիւնն,  
որ էր աստուածանալ: Վերջապէս ահա այս-  
պէս մարդացաւ Յիսուս, պրակէս զի մենք աւ-  
տուածանանք: Երկինք ու երկիր վկայեցին որ  
Յիսուս Որդի է Աստուծոյ — հրեշտակներն  
երգելով, հովիւներն լսելով և ետիսը, զուարթ-

<sup>4</sup> Յիսուս նշանակում է Փրկիչ. Քրիստոս  
Օծեալ: Յիսուս մարմնանալուց առաջ կոչուում էր  
Քանն, Բանն Աստուած, Միածին, Որդի Աստուծոյ,  
Տէր զօրութեանց: Տէր Սարաւովթ և այլն.

նոց երգերը և տեսնելով Մանկացեալ Փրկիչը՝  
Մոգերն երկրպագութիւն անելով և ընծաներ  
նուիրելով, Սիմեօն ծերունին գզուելով, Հայր  
Աստուած երկնքից վկայելով՝ Դա է Որդի իմ  
սիրելի, ընդ որ հաճեցայ և Ա. Հոդին աղաւ-  
նակերպ իջնելով։ Ա. յ՛. Մանուկ ժնաւ Ձեռ  
Որդի պատուած Ձեզ։

Բ. Որոյ էշտանո-Շին է-ը Եղւ է Վերայ ո-  
սոց ի-ցոց։ Յիսուս Քրիստոս մկրտուելուց վերջն  
ստացաւ զանազան անուններ էլ, որք են՝ Ուռի  
Մարտու, Որդի Դաստիա, Էջմանուէլ և այլն։ Ա. յ՛  
անուններն վերաբերում են մարդանալուն.  
Էմմանուէլ—Աստուած Ձեռ հետ է—ասել է։  
Քանի որ մարդ էր եղել Փրկիչն, Հարկ էր՝  
որ իրեն վերցնէր ի-ը ո-ւ-երէ Վերայ։ Հասարակ  
իր չէր իւր ուսերի վերայ վերցրածը, այլ  
շատ մեծ և շատ ծանր իր—այս է՝ ամրող  
աշխարհքիս մեղաց ծանրութիւնը—խաչափայտը  
շալակել էր Յիսուս Քրիստոս և տանում էր  
Գողգոթա։ Ա. հա այսպէս Խաչուական էր Քրիս-  
տոսի էշտանո-Շին։ «Զի ես դնեմ զանձն իմ  
զի միւսանգամ առից զնա։ Ոչ ոք հանէ զնա  
յինէն (ասում է Յիսուս) այլ ես դնեմ զնա  
(զանձն) անձամբ իմով, էշտանո-Շին ունիմ  
դնել զնա, և էշտանո-Շին ունիմ միւսանգամ  
առնուլ զնա» (Յովէ. Ժ. 17—18)։ Փրկիչն  
կամենում է ասել ես էշտանո-Շին ունիմ

իբրև մարդ մարմնովս մեռանիլ. էշտանո-Շին  
ունիմ նաև իբրև Աստուած աստուածու-  
թեամբս և մարդկային հոգւովս ապրեցնել  
հադուած մերածները. ինչպէս ասուած է Ովսէ  
մարդարէի ձեռնով (Ժ. Գ. 14) «Ի ձեռաց գժու-  
խոց ապրեցուցից զնոսա և ի մահուանէ փրկեցից  
զնոսա։ Ուր է յաղթութիւն քո, մահ. ուր  
է խայթոց քո, գժուիք։»

Հին օրինաց անբան զոհերի արիւնն ան-  
բաւական էր փրկել զմարդը, վասն զի մարդն  
զոհերի կենդանիներից շատ աւելի գերազանց  
էակ էր. վասն որոյ հարկ էր մարդից շատ և  
շատ աւելի գերազանց էակի արիւն, որով  
փրկուէր մարդն։ Լաւ ևս է ասել՝ Աստուած,  
որ իւր պատկերի նման ստեղծած էր մարդը,  
արժան չհամարեց մարդը փրկել անբան կեն-  
դանեաց զոհերով, այլ կամեցաւ մարդը փրկել  
իւր Միածին Որդու Յիսուս Քրիստոսի աս-  
տուածային արիւնով<sup>1</sup>։ Ա. յ՛ս պատճառաւ Որ-  
դին ասում է Հօր Աստուծոյ. «Ընդ զոհս և  
ընդ պատարագս ոչ հածեցար... զողջակէզս և  
զվասն մեղացն ոչ խնդրեցեր։ Յայնժամ ասա-  
ցի թէ ահաւասիկ գամ ես, ի գլուխս գրոց

1 «Ես սէր յաւիտենական սիրեցի զքեզ (Ժո-  
ղովուրդ), վասն այնորիկ ձգեցի զքեզ ի գթութիւն»  
(Եր. ԱԱ. 3).

գրեալ է վասն իմ։ Առնել զկամն քո, Առառւած իմ, կամեցայ և զօրէնս ի մէջ որու վայնի իմոյ » (Սաղ. 1.թ. 7—9):

Արդէն նախասահմանուած էր, որ Փըրկիչն իւր առարտաժային պարապահաւա փրկէր մարդը և խափաներ անբան կենդանեաց զույր։ Փրկիչն պէտք է սննարդուէր, չարչարուէր և ասնջուէր և թաղուէր գերեզմանում իրեւ մարդ, ամեն մարդարէներից աւելի գեղեցիկ է նկարագրում Խային, և մինչեւ անդամ իրեւ ականատես, չնայելով Քրիստոսից մօտ 740 ասրի առաջ էր, ասում է նա Քրիստոսի բերանից։ «Իմ թիկունքները առեկ հարուածողներին և իմ երեսները չդարձուցի ամօթից թքողներից» (Սո. Ծ. 6): Ապա զբում է նո. 11 ենք տեսանք զնա (զՅիսուս), ոչ կերպարանք ունէր նա և ոչ գեղեցիութիւն, այլ նորա տեսքն մարդոց ամեն որդիներից աւելի անարդուած էր և նուազած։ մի մարդ, որ հարուածների ժամանակ գիտէ համբերել ցաւոց, որովհետեւ այնպէս անարդուեցաւ և ոչինչ համարուեցաւ, որ պէտք էր երեսը ծածկել (մարդ և չտեսնել նորա անարդանքը): Նա շարկում է մեր մեղքերը (խաչափայտը) և չարչարուում է մեզ համար և մենք համարեցինք զնա ցաւերի, հարուածների և չարչարանքների մէջ ինչպէս

Աստուծուց (Հօրից) թոյլատրուած։ Բայց նա վիրաւորուեցաւ մեր մեղաց համար և պատժուեցաւ մեր անօրէնութեանց համար, մեզ (Հօր Աստուծոյ հետ) հաշտեցնելու համար պատժուեցաւ և մենք բժշկուեցանք նորա վերքերով։ Ամենեքեանքս մոլորուած ոչխարի պէս (էինք), ամեն մարդ մոլորուեցաւ իւր ձանապարհում և Տէրն (Հայր Աստուած) մասնեց զնա մեր մեղաց համար (մեղքերը քաւելու համար)։ Եւ նա չբացաւ իւր բերանը իւր վշտի համար, այլ ոչխարի նման վարեցաւ ի սպանդանոց (Գողգոթա) և ինչպէս որոջ անմռունչ մնում է խուզողի առաջ, այնպէս չէ բանում իւր բերանը։ Նորա անսահման խոնարհութեան պատճառաւ վերցուեց նորա գատաստան։ և ովկ կարող է պատմել նորա ազգատոհմը (Հայր Աստուած է Քրիստոսի ազգատոհմն և Ո. Հոգին)։ Զարերի շոշտում եղաւ նորա գերեզմանն» (այս է՝ Ցիսուս թաղուեցաւ իւրեւ մեղաւոր, չար և մեղաւոր մարդոց գերեզմանում) (Ես. Ծ. 1—10):

«Կալան զՅիսուս և կապեցին և ածին զնա նախ առ Աննա» (քահանայապետ) . . . «սպասաւորներից մին ապտակ զարկաւ Ցիսուսին» (Ցով. Ժ. 12—13 և 22): «Եւ Ցիսուսը տարան կայիշափայ քահանայապետին մօտ . . . և Ցիսուս միայն լուռ էր . . . : Ոմանք սկսան

թքնել նորա երեսներին, հագուստը ձգել  
դիսովն, կռիմել և ասել. Մեղ համար մարդա-  
րէաց, ով Քրիստոս, ով է նա, որ զարկաւ  
քեզ... զինուորներն կապեցին զՅիսուս և տա-  
րան ներս... Նորա գլխին դրին փշերից շի-  
նուած պատկ ... և ծեծում էին Նորա գլուխը  
եղեգով և թքում երեսներին» (Մարկ. Ժ. Վ.  
23 — Ժ. 20): «Եւ ինքն Յիսոս շալակած էր  
խաչափայտը և բարձրանում էր այն տեղն որ  
կոչուում է Գողդոթայ, ուր խաչեցին զնա...  
և նոքա լեղու հետ խառնած քացախով լցրին  
սպունդը .. մօտեցրին Յիսուսի բերանին... զի-  
նուորներից մին գեղարդով խոցեց Յիսուսի  
կողը և անմիջապէս ելաւ արիւն և ջուր»  
(Յով. Ժ. 17 — 34):

Ահա այսպէս ծանրագոյն պաշտօն ստանձ-  
նած էր Յիսուս Քրիստոս՝ մարդը փրկագոր-  
ծելու համար: Տեսանք թէ ինչպէս համբերեց  
դառն տանջանքների, չարչարանքների և նա-  
խատինքների: Սուրբ սեղանն էր խաչափայտն,  
ստուածային զոհն էր Գառն Աստուծոյ.  
Փրկագործող քահանայապետն էր Յիսուս  
Քրիստոս, որ ջնջեց մեր հակառակորդի ձե-  
ռագիրը, խորտակեց ուժը, խաչափայտի վե-  
րայ բեերեց մեր մեղքերը, իւր ս. արիւնով  
լուաց մեր հոգիները, քանդեց իւր մարմնոյ  
պատարագաւ այն Թջնորճ—մեղաց թանձը

պատը —որ ձգուած էր մեր և աստուածու-  
թեան մէջ: Խաղաղութիւն արաւ երկնքի և  
երկիս մէջ և մարդկային գրեածուած հա-  
ջու ներկայացուց Հօր Աստուծոյ աղաղակե-  
լով: «Հայր, ի ձեռս Քո աւանդեմ զհոգի իմ»  
(Ղուկ. Ի. 46): Պատանքուելով թաղուեցաւ  
մարմնով. քանդեց դժոխքը, աղատեց բան-  
տարկեալ հոգիները, իւր աստուածային իշ-  
խանութեամբ խայտառակեց և ոչնչացուց սա-  
տանայի իշխանութիւնը և պետութիւնը, փա-  
ռաւորապէս յարեաւ երեք օրում և 40 օրից  
յետոյ համբարձաւ երկինք և նստաւ Հօր Աս-  
տուծոյ աջ կողմում: Ա. հաւասիկ սորտ հս-  
մար է ասում. Որոյ Եղիանալին էր Եղի-  
ն Վերայ սասոց իւրոյ:

Գ. Եւ անոն կողեց նմա՝ հրեշտակ մէծէ  
իտրինդոյ: Արդէն փոքր ի շատէ ծանօթացանք  
Յիսուս Քրիստոսի աստուածային և Տարդիային  
անուններին: Այժմ ծանօթանանք հրեշտակառի  
հետ կապուած անուան: Հրեշտակ անունն նշա-  
նակում է պատրիարքուր, խօս+ կամ հրաման կամ  
կարգադրութիւն և որոշում տանող և հաղորդող  
այս ինչ և այն ինչ անձին: Այսպիսի էր  
Գաբրիէլ հրեշտակապետի պաշտօնի պատգա-  
մաւորութիւնն առ Զաքարիա և առ Մարիամ  
ս. կոյս, նոյնպէս և հոգիւներին աւետող և  
«Փառք ի բարձունս» երգող հրեշտակներն:

Բայց Յիսուս Քրիստոս յանձնառու եղած  
էր Մէծ Խորհրդի պատգամաւորութիւն, այս է  
Մարդը հաշվեցնէլ Հօր Աստուծոյ հետո. Տարբը  
հեռացնել Տուստիւան, Թշնայ և կուտազու-  
նան Ռաժտուորանինից և Ենթարկել Ճշմարիտ  
Աստուածութեան, անանց թագաւորսւթեան,  
որից ստեղծուած է ինքն մարդն. և միանդա-  
մայն Ռաժտուորինիւ ամեն սրտերում Աստու-  
ծոյ թագաւորութիւնը և ճշաշգանինը խւր  
ամեն պարզաներով: Յիսուս Քրիստոս ստանձ-  
նած էր կատարել խոստացեալ Զաւակի, Մէ-  
տայի, Փրկի, Քահանայի, Մարդարէկի և Թափա-  
ռը պաշտօններ: Այդ ամենը կատարեց ամե-  
նայն անձնուիրութեամբ մինչեւ հակո- խառնէ<sup>ն</sup>  
և հակո- գէցիւլանի համբէրէլու: Սորա համար է  
ասում մարդարէն. «Եթէ Տէր Աստուած մեզ  
համար Զաւակ թողած չլինէր, Սոզոմի պէս  
կլինէինք և Գոմօրին կը նմանուէինք» (Ես.Ա. 9):  
Ահա այս պատճառաւ է ասում. Հշեցուակ Թէքէ  
Խորհրդոյ: Պօզոս ս. առաքեալն Թէք Խորհուրդն է  
անուանում Ամուսնութիւնը, բացատրելով թէ  
Խորհրդիս մեծութիւնն Քրիստոսի մէջ է,  
որով եկեղեցին միանում է Աստուածու-  
թեան հետ:

Դ. Ստանէւի Խորհրդակից. Պէտք է ի բոլոր  
սրտէ հաւատանք որ Երկինք և Երկիրս ստեղ-  
ծագործելու ժամանակ Բանն Աստուած, Միա-

ծին Որդին խորհրդակից և Հօր Աստուածը և  
Հոգւոյն Աստուածոյ: Այս Ճշմարտութիւնն  
Երկում է նոյն իսկ Ս. Գրքից. «Եւ ասաց  
Աստուած, ստեղծենք մեր պատկերին և նմա-  
նութեան համեմատ մարդ» (Ծնն. Ա. 20):  
Պարզ Երկում է որ Տարբը ստեղծելուց առաջ  
նախ Խորհրդագ կազմած է Ս. Երրորդութիւ-  
նըն—Հայր, Որդի և Ս. Հոգի և Խորհրդակ-  
ցելուց յետոյ ստեղծած Տարբը: «Ակզրից Եր-  
կիրը ստեղծելուց առաջ և անդունդները գործ-  
ելուց առաջ, աղբիւրների ջուրերն ըլիսելուց  
առաջ, լեռները և բլուրները հաստատելուց  
առաջ Տէրն (Հայր Աստուած) ծնաւ զիս: ...  
Երբ պատրաստում էր Երկինքը (Հայր Աս-  
տուած) ես նորա հետ էի, Երբ զօրացնում  
էր վերին ամպերը և հաստատում էր ան-  
դընդոց աղբիւրները... Երբ հաստատուն դնում  
էր Երկի հիմունքը, ես (Բանն Աստուածս)  
նորա—Հօր Աստուածոյ մօտ էի... ես էի, որով  
միշտ ուրախանում էր Տէրն և ամեն ժամա-  
նակ ցնծայի նորա առաջ» (Ա. Ա. 23—30):  
Ահա այսպէս միշտ Խորհրդակից Եղած է Բանն  
Աստուած Հօր և Հոգուն Երկնքի և Երկրիս  
և ապա բոլոր զարդերի ստեղծագործու-  
թեան ժամանակ, որի պատճառաւ էլ ասում  
է Ստանէւի Խորհրդակից:

Ե. Աստուած հոգը. Մորի մէջ բազմածն

մեզ երեսում է մի փոքրիկ մանուկ, մի տկար անզօր մանկիկ: Սակայն Նա է հզօր Աստուած, Նա է, որ խօսքով ոչնչից ստեղծեց երկինքը և երկիրս, Նա է, որ խօսքով ստեղծեց անթիւ հրեշտակները և հողից մարդ. Նա է, որ կործանեց Սոգոմ և Գոմոր, տեղաց հրաշքներ Եգիպտոսի վերայ, պատառեց Կարմիր ծովը և նորա մեջ խեղդեց Փարաւոն իւր զօրքով՝ անապատում մանանայով կերակրեց 40 տարի Խորայէլացիները և ապառաժից բղիսեցուց ջուր: Ա.Հա այսպէս Հպօր Ա.ստուած է մանկացեալ Յիսուս: Մարդը ստեղծելու ժամանակ այնքան նեղութիւն չկրեց Փրկիչն՝ որքան կրեց ապականուած մարդը վերածնելու համար: Հզօր Աստուած է Փրկիչն, որ զօրութեամբ աւերեց գժոխքը, ապատեց հազարաւոր տարիներ բանտարկեալները և Հպօր աստուածունէամբ յարթառ դերեզմանից:

Զ. Իլիսան հայր հանդէցիւլց աշխարհին. Երբ վերջանայ այս աշխարհն, այնուշետե կակսի միւս աշխարհի իշխանութիւնն: Ա.Հա այս է հանդերձեալ աշխարհն: Ա.յդպէս վկայում է և ինքն Յիսուս Քրիստոս՝ ասելով. «Եւ ոչ եթէ Հայր (Աստուած) դատում է մեկը, այլ իւր Որդուն տուաւ ամեն աեսակ դատաստան, որպէս զի ամենքն էլ պատուեն Որդին, ինչպէս պատուում են Հայրը ... Եւ

իշխանութիւն տուաւ (Հայրն Որդուն) նմա դատաստան անել. և որովհետեւ Մարդոյ Որդի է, այդ բանի համար ինչո՞ւ էք զարմանում. որովհետեւ կը դայ ժամանակի, որի մեջ ամենքն՝ որ դերեզմաններում կը լինին, կը լսեն նորա (Յիսուսի) ձայնը (յարութիւն կառնեն) դուքս կը դան. նոքա՝ որ բարիք գործած կը լինին՝ կենաց յարութիւն կառնեն, և նոքա՝ որ չար գործած կլինին, դատաստանի յարութիւն կառնեն» (այս է պէտք է՝ դատուին). (Յով. Ե. 22—23): Ա.յսպէս է և հետեւալն.—արդարոց վիճակն դատաստանից յետոյ:

«Եւ տեսայ նոր երկին և նոր երկիր, որովհետեւ անցան առաջին երկինք և երկիր, և ծով չկար: Եւ տեսայ ս. քաղաքը—նոր Երուսաղէմը, որ ... հարսի պէս զարդարուած էր իւր փեսային համար, և երկնքից լսեցի մի ձայն, որ ասում էր. «Ա.Հա Աստուածոյ խորանն մարդոց մեջ. և կը բնակէ նոցա հետ, և նոքա ժողովուրդ նմա և Սա Աստուած նոցա: Եւ կը ջնջէ նոցա աշքերից բոլոր արտասունքները, և չլինիր այլ ևս ո՛չ մահ, ո՛չ սուդ, և ո՛չ աղաղակ, ո՛չ ցաւեր, և ո՛չ աշխատանք... և ասում է ինձ. ես եմ սկիզբն և կատարած» (Յայս. Ի. 1—6):

Ուրեմն աշխատենք որ անօգուտ չանցնի Յիսուս Քրիստոսի մեզ համար մանկանալն,

մարդանալ, խաչուիլն և թաղուիլն. աշխատենք՝ որ անօգուտ չանցնի Փրկչի մեզ համար թափած արիւնն, աշխատենք որ մեր մեղքերով մեզ համար դժոխք չընենք. աշխատենք մենք էլ համբերութեամբ տանել մեր խաչը: ի վերջոյ աղօթենք որ մեզ էլ արժանացնէ իւր անձառելի շնորհքներին. ամէն:

### ՔԱՐՈԶ ԺԱ.

«Այսուհետեւ չես ծառայ, այլ որդի. եթէ որդի և ժառանդ Աստուծոյ» (Գաղ. Պ. 4):

Այսուհետեւ ծառայ չես, այլ որդի ես, եթէ որդի ես, ուրեմն ժառանդ ես Աստուծոյ: Պօղոս Սրբազն առաքեալի այս խօսքին միտքը լաւ հասկացնելու համար ամենակարեւոր է բացատրել ծառայ, որդի և ծառանդ բառերը առանձին առանձին:

Ծառան ոչ տան որդին է և ոչ տան ժառանդն, այլ փողով վարձուած սպասաւոր է: Ա. Գրքում երեսում է որ շատ անդամ գուգարանուում է մարմնաւոր, հաւատարիմ և պնիւ ծառան: Ատկայն այս չէ Պօղոս առաքեալի ասած ծառան:

Սովորաբար շատ են որդիների տեսակ-

ներն: Օրինակ հարազատ որդի, հոգեզաւակ որդի, ապօրինի որդի, վատնող որդի, ելն: Հարկ է յայտնել թէ սոցանից և ոչ մին ժառանգում է իւր ծնողաց ունեցած հարըստութիւնը: Որովհետեւ փորձով տեսնուած է որ ժառանգութիւնից զրկուած են այն մարմնաւոր որդին, որը իւրեանց անառակ վարքով առելի եղած են իւրեանց ծնողաց, որը միշտ շռայլութեամբ վատնում են իւրեանց ծնողաց ժառանգութիւնը, որը ամենայն մասամբ նախստինք և անարգանք են լինում իւրեանց օձարնն, ազգին, եկեղեցուն և նախնեաց, որը անուանարկում են և անպատճում իւրեանց ծնողաց անունը, պատիւը և վարկը: Այսուհետեւ ժառանգութիւնից զրկուում են այսպիսի մարմնաւոր որդիք:

Իւրեանց ծնողաց հարստութիւնը ժառանգում են միայն այն որդիքն, որը իսպատհազանդ են իւրեանց ծնողաց, որը իւրեանց ալմիւ վարքով և բարքով վայելում են իւրեանց հարց և մարց համակրութիւնը, որք միշտ տնտեսութեամբ շահագործում են իրանց յանձնուած զրամագլուխը, որք ամենայն մասամբ վառք ու պարծանք են լինում իւրեանց ծնողաց, բարձրացնելով նոցա անունը, պատիւը և վարկը հասարակութեան մէջ: Աչայսպիսի աղնիւ յատկութիւն ունեցող որդիք

են ժառանչում իւրեանց ծնողաց հարստութիւնը և կայքը:

Բայց Պօղոս ս. առաքեալի խօսքն այստեղ մարմնաւոր ծառայի, որու և մարմնաւոր ծառանչի մասին չէ, այլ հոգեոր: Ծառայ չէ նշանակում փողով վարձուած սպասաւոր, այլ նշանակում է կուռքերին ծառայող, մոլութեանց և մեղաց ծառայ եղած մարդիկ, մեղաց գերի ելած «արքաներ»: Առաքեալիս քարոզութեան ժամանակ կուտազտ էր մարդկութեան ամենամեծ մասն: Մարդիկներից ոմանք ջերմեռանդութեամբ իրեւ աստուած պաշտում էին արեգակը, լուսինը և աստղները, ոմանք պաշտում էին վիշապներ, կոկորդիլոսներ և կովեր. շատերն պաշտում էին ոսկուց, արծաթից, պղնձից և քարից շինուած կուռքեր և արձաններ, շատերն նեղոս և Գանդէս գետերը, շատերն պաշտում էին կանացի պատկերներ. վերջապէս ճշմարիտ Աստուծոյ փառքը, պատիւը, երկրագութիւնը և պաշտումը տալիս էին անդայ և անբան գաղաններին և արարածներին: Ահա այդ ամենի համար է ասում առաքեալն. Այսուհետեւ ծառայ չէ: Կամենում է ասել քանի որ Յիսուս Քրիստոս Փրկիչն արդէն ոչնչացուցած է սատանայի զօրութիւնը, խայտառակած նորա զօրութիւնը, ծանօթացուցած է մեղ ճշմարիտ աստուածու-

թեան հետ և խափանած կուռքերի և մոլութեանց պաշտամունքը և ծառայութիւնը. ուրեմն, ժողովուրդ, այսուհետեւ այլ ևս ծառայ չես արեգակն, լուսնի և աստղների, ծառայ չես գաղաններ և գետեր պաշտելու. ծառայ չես սողուններին և ձեռագործ կուռքերին երկրպագելու, ծառայ չես այլ ևս արձաններ և ձեռագործներ պաշտելու, այլ ևս ծառայ չես արարածներ պաշտելու, այսուհետեւ գու Աստուծոյ որդին ես, Քրիստոսի թափած արիւնով գնուած և ազատուած ես սատանայակն իշխանութիւնից և մեղաց գերութիւնից և որդեգրուած Հօր Աստուծոյ: Ասում է մի և նոյնը և Յովհաննէս Աւետարանիչն՝ գրելով. «Աիրելիք, այժմ «որդի» Աստուծոյ էմ: . . . յայս սակա յայանեցաւ Որդին Աստուծոյ, զի լուծցէ զգործս սատանայի» (Ա. Յով. Գ. 2—8):

Մենք Աստուծոյ որդիքն ենք արդարեւ, բայց ոչ թէ բնութեամբ «որդիք», այլ չնորհիւ Քրիստոսի: Հօր Աստուծոյ բնութեամբ որդի՝ միմիայն միածին Որդինանն Աստուած է, Որ Հօր Աստուծոյ և Հոգւոյն Աստուծոյ բնութեանակից է և էութենակից: Առաջին մարդն-Ադամ պապին—արգելուած պտուղը կերաւ աստուածանալու համար, սակայն ոչ միայն աստուած չեղաւ, այլ և մարմնով էլ մեռաւ, հոգ-

ւով էլ: Հօր Աստուծոյ Միածին Որդին Աղամի նման մարդ եղաւ, Աղամի հաւաքայցեաւ որդիքը անուանեց ի-ը Եղայցնէր և Հօր Աստուծոյ որդի, վերակենդանացոյց հոգւով Աղամը և սորա ամեն հաւաքայցեաւ սերունդը. Քանզի մարդով եղեւ մահ և մարդով (մարդացեալ Յիսուսով) յարութիւն մեռելոց, որպէս Աղամաւ ամենեքին մեռանին, նոյնպէս և Քիսասովիւ ամենեքին կենդանացին իւրաքանչիւր յիւրում կարգի՝ նախ Քիսասոս և ասլա քրիստոսեանք» (Ա. Կոր. ԺԵ. 21—23): Մէկ խօսքով Աստուծած մարդացաւ և մարդը աստուծացոյց, որ էր առաջին մարդոյ ցանկութիւնը: Ահաւասիկ սորա համար է ասում. Այսուհետեւ ժառայ չեւ, այլ որդի եւ, ենէ որդի եւ, որդին Աստուծոյ ժառանձն եւ:

Ժառանձ Աստուծոյ՝ նշանակում է Աստուծոյ աեսութիւնը ժառանձող և վայելող նորա փառքը և մշտնջենաւորութիւնը, որոց մէջ է ծայրագոյն երջանկութիւնն: Այս անզուդական շնորհքը Աստուծոյ ապահովութեանը ժառանձեւը խոստացած է մեղ Փրկիչն՝ ասելով. «Ուր եսն եմ, անդ և պաշտօնեայն իմ եղիցի» և թէ «զի հաճեցաւ Հայր ձեր տալ ձեզ զարքայութիւն» :

Հարկ է յայտնել թէ ամեն որդի անխափի է կարող ժառանձել այդ անզուդական եր-

ջանկութիւնը. վասն զի «անիրաւք զարքայութիւնն Աստուծոյ ոչ ժառանձեն, մի խարիք, ոչ պոռնիկը, ոչ կռապարիշար, ոչ շունք, ոչ իգացեալք, ոչ արուագէտք, ոչ գողք, ոչ ագահք, ոչ բամբասողք և ոչ յափշտակողք զարքայութիւնն Աստուծոյ ոչ ժառանձեն» (Ա. Կորն. Զ. 10 և Գաղ. Ե. 19—21): Աստուծած գանգատում է մարդարէի բերանով իսրայէլի ժողովրդեան անառակութեանց մասին ասելով. «Որդին փառաւորում է իւր հայրը և ծառան փախում է (ակնածում է) իւր տիրոջից. իսկ արդ՝ եթէ ես հայր եմ, ուր է իմ փառքն, և եթէ տէր եմ, ուր է իմ պատիւն» (Մաղաք. Ա. 6): Իսկ մեր Փրկիչն Յիսուս Քրիստոս մեղ զգուշացնելով ասում է. «Ոչ ամենայն՝ որ ասէ ցիս Տէր Տէր, մոցէ յարքայութիւն երկնից, այլ որ առնէ զկամս Հօր իմոյ, որ յերկինս է: Բազումք ասիցեն ցիս յաւուր յայնմիկ. Տէր Տէր, ոչ յանուն քո մարդարէացաք և յանուն քո դես հանաք և յանուն քո զօրութիւնս բազումա արարաք: Եւ յայնժամ ասացից ցնոսա. եթէ ոչ երբէք գիտէի զձեզ. ի բաց կացէք մինչեն ամենեքեան, ոյք գործէք զանօրէնութիւն» (Մատ. Է. 21—23]: Աստուծածային գատաւոր Յիսուս Քրիստոսի այս սոսկալի վճիռն մի ամենազօրեղ և սպառնալի

Խթան լինելու էր ամեն մի քրիստոնէի համար դէպի բարին և դէպի երկիւղածութիւնն ընթանալու այս կեանքում։ Եթէ շատ որդիք ամեն ջանք գործ են դնում, որ չզրկուին իւրեանց մարմնաւոր հարց կորստական ժառանգութիւնից, որչափ ևս աւելի կարեոր է մեզ հոգեոր որդւոցս համար գործ դնել ամեն ջանք և հնարք, ամեն արթնութիւն և զգուշութիւն, ամեն խոնարհութիւն և հեղութիւն, ամեն համեստութիւն և անձնուիրութիւն, որպէսզի չզրկուինք յաւիտենական ժառանգութիւնից և մշտնջենաւոր երջանկութիւնից։ Որովհետև Փրկիչն՝ մեր կատարեալ որդիւութեան պարտաւորութիւնները գլխաւորապէս սահմանում է հետեւեալ առաքինութիւնները գործքով կատարելու մէջ, որք են (ամեն քրիստոնեայ իւր կարողութեան թեան չափով) կերակրել անօննէրը, ջուր խմեցնել ծարսեներին, հիւրընկալել օդաբնէրը հագցնել թրիւրը, տեսութեան գնալ հիւանդնէնն և այցելութեամբ միխթարել բանդարչիւրը։ Այս զլիսաւոր առաքինութիւնները մեզանից պահանջող Փրկիչն նախ ինքն անձամբ մատակարարած է մեզ այդ բոլոր շնորհները. վասն զի նախ «Սկսաւ Յիսուս առնել և ապա ուսուցանել» (Գործ. Ա. 1): Օրինակ. մենք սոված, անօթի էինք ոչ թէ կո-

րլստական հացին, այլ կենաց հացին. Քրիստոս մատակարարեց մեզ և միշտ պարզեռում է մեզ կենաց Հայոց իւր կենսատու մարմինը. մենք ծարաւ էինք անմահական բաժակին, նա շնորհեց մեզ իւր սրբարար արքենը և միշտ շնորհում է մեզ մեր հոգեւոր կեանքը վերանորոգելու համար. մենք օաար էինք, պատուիրանականցութեամբ հեռացած էինք Աստուածութիւնից. Նա հիւրընկալեց մեր մեղանչող մարմինը և հոգին իւր աստուածային բնութեան մէջ և տարաւ բաղմեցուց Հօր Աստուծոյ աջ կողմում. մենք մերկացած էին Հոգւոյն Սրբոյ Եօնարիխան շնորհքներից ինչպէս անզուգական զգեստից։ Մենք հիւանդ էինք հոգեւոր և մարմնաւոր անբութելի հիւանդութեամբ.<sup>1</sup> Նա եկաւ մեզ տեսութեան և բըժըշկեց մեր հոգեւոր յառերը և վերերը<sup>2</sup>, բըժըշկեց այս. բայց իւր իսկ ցաւերով և վերքերով—խաչափայտի վերայ բեւեռուելով և

<sup>1</sup> «Ամենայն գլուխ կցաւս և ամենայն սիրտ ի տրտմութիւն. յոտեց մինչև ցգլուխ չկը ի նմա առողջութիւն . . . չկը սպեղանի ի վերայ դնել, ոչ ձէթ և ոչ պատանս» (Ես. Ա. 5—6): «Այր մի . . . անկաւ ի ձեռս աւազակաց, որք մերկացուցին զնա. և վերս ի վերայ եգին, թողին կեսամահ և գնացին . . . , (Ղուկ. Ժ. 30—37):

2 Մատ. Ը. 17:

տանջուելով՝ Մեր նախնի պապերի հոգիս-  
ներն բանտարկուած էին, ոչ հասարակ բան-  
տում, այլ դժոխքի անելանելի բանտում.  
Յիսուս հոգով և աստուածութեամբ իջաւ և  
այցելեց բանտարկեալ հոգիներին, աւերեց  
դժոխքը և ազատեց բանտարկեալ հոգիները:  
Ահա այս ամենը նախ ինքն կատարած է ար-  
դեամբ և գործովք, ապա պահանջում է  
իւր արքայութիւնը ժառանգողներից։ Երկ-  
րորդ անդամ աշխարհ գալու է ինքն Փրկիչն  
և անձամբ հրաւիրելու է այդ առաքինու-  
թիւնները գործողները՝ ասելով. «Եկէք իմ  
Հօր օրհնածներ, եկէք ժառանգեցէք աշ-  
խարհի սկզբից ձեզ համար պատրաստուած  
արքայութիւնը։ Որովհետեւ անօթեցայ՝ կե-  
րակրեցիք զիս, ծարաւեցայ՝ խմացրիք ինձ,  
օտար էի՝ հիւրասիրեցիք զիս, մերկ էի՝ հա-  
գուստ հագցուցիք ինձ, հիւանդ էի՝ տեսաք  
զիս, բանդում էի՝ ինձ մօտ եկիք» (Մատ.  
ին. 34—46)։ Մարդկային տկար ընութիւնն  
պահանջում է այդ ամենը, և երբ մենք մի-  
մեանց մատակարարում ենք այդ պարտաւո-  
րութիւնները, Փրկիչն համարում է նոյն իսկ  
իրան արած. «Որովհետեւ արարիք միում  
յեղբարցս այսոցիկ փոքրկանց, ինձ արարիք»։

1 ՏԵ՛Ս ԵԱ. ՄԳ. 1—10 և չորս աւետարան։

Ահա սորա համար է ասում. Այսու-  
հետեւ չես ծառայ, այլ որդի, եթէ որդի և  
ժառանգ Աստուծոյ։ Աշխատենք գործքով կա-  
տարել այդ պարտաւորութիւնները և աղօ-  
թենք միշտ, որ մեզ էլ արժանացնէ Փրկիչն  
«Եկէք իմ Հօր օրհնածներ» քաղցր ձայնին  
վերջին օրում։ ամէն։

### ՔԱՐՈՉ ԺԲ.

«Զգո՛յշ լերուք ի սուտ մարդարէկցն՝  
որ գան առ ձեզ հանդերձիւք ոչխա-  
րաց, և ի ներքոյ են գայլք յափշտա-  
կողք։ Ի պազոյ նոցա ժանիջէք զնոսա»  
(Մատ. Է. 15—16)։

Փորձառու հոգեոր և մարմնաւոր ծնո-  
ղաց յասուկ է զգուշացնել եւրեանց հոգեոր  
և մարմնաւոր զաւակները հոգեոր և մարմ-  
նաւոր վասնգներից, զգուշացնել հոգեոր և  
մարմնաւոր կեանքի դէմ լարուած որոգայթ-  
ներից (թալակ) և փորձանկներից։ Այս, յա-  
տուկ է նոցա զգուշացնել հոգեոր և մարմնաւոր  
մարդասպաններից, զողերից և յափշտակող  
գայլերից։ Ահա այսպէս զգուշացնում է և մեզ  
ամենիս, ինչպէս Տէր և Փրկիչ, ինչպէս քարո-  
զիչ և վարդապետ և ինչպէս փորձառու վար-

ժապետ և խրատիչ, ինքն Յիսուս Քրիստոս  
ասելով. «Զի՞՞ շացէ՞ + սո՞ւս մարդաշէնեցէց, «ո՞  
գույն են յեղ օսու ավարդնեցի հագուստնեցով և  
ներնեց յափշտակուղ գոյլեր են: Կոյս պատշվէնեց  
պէտք և ճանաշէ՞ + դնուա:

Զգուշութիւնն հոգեոր և մարմնաւոր  
կեանքի ապաստարանն է ամեն պարագայի մէջ,  
և մեր միակ մերձաւոր պաշտպանն, և այս  
ինչպէս մի անձի համար, նոյնպէս և մի ազդի  
և եկեղեցու համար: Քանի քանի անձինք,  
քանի քանի ազգեր զոհ եղած են անզգու-  
շութեամբ Քրիստոսի այս պատրուելը ճառարժելո-  
պատճառաւ: Փորձով գիտենք, որ զգուշացող  
կենդանիք ազատուում են որոգայթներից, իսկ  
անզգուշներն ընկնում են որոգայթների մէջ և  
սպանուում:

Ինչպէս լինում են խռա ակունք և կեղծ  
ակունք, մաքուր արծաթ փող և կեղծ փող  
(շալէ դրամ), զուտ ոսկի և կեղծ ոսկի, խռ-  
նո չիթ և կեղծ չիթ, նմանապէս լինում են  
ճշմարտախօս և սուտիս մարդիկ, ճշմարտ և խռ-  
նութեայ քարոզիչներ, խոհական և կեղծ մարդա-  
րէներ, անիշնչ և կեղծ բարեկամներ և ընկեր-  
ներ և քահանաներ, զոր օրինակ հայկական  
առածն առում է. «Մարդ մարդի տահանայ,  
մարդ մարդի սուտանայ:» Ահա սորա համար է  
զգուշացնում մեզ Փրկիչն սուտ մարդաշէնեցից.

Դանէւթայ և խարթակ անձերից և կեղծ ու սուտապա-  
տիչ մարդուներից, որք քանդում են ամեն ինչ:  
Իսրայէլի (Ճշուաների) տունը քանդե-  
ցին սուտ մարդարէներն, որք քարոզում էին  
Ճշմարիտ մարդարէների քարոզածների հակա-  
ռակը, որով ժողովուրդն ծռուեցաւ աստուած-  
պաշտութիւնից կրապաշտութիւն, առաքի-  
նութիւնից՝ մոլութիւն, լուսից՝ խաւար և բա-  
րոյականութիւնից՝ անբարոյականութիւն: Այս-  
պիսով կործանուեցան Հրէից թագաւորու-  
թիւններն, քայլայուեցան ներքին ուժերն,  
քանդուեցաւ Տաճարն, գերի գնաց ժողովուր-  
դըն և վերջապէս ամեն կողմեր ցրուեցան և  
հալածուեցան Հրէաններն: Ահա այս եղաւ  
սուտ մարդարէների տուած օգուան: Զար-  
մանալին այն է որ ժողովուրդն աւելի հաճու-  
թեամբ լսում էր սուտ մարդարէների կրտսեա-  
բեր քարոզները քան Ճշմարիտ մարդարէների  
կենապէտը քարոզները: Ուրեմն պէտք է որ մեզ  
համար ամենասպազու իրատ լինի Փրկչի խօս-  
քըն՝ զի՞՞ շացէ՞ + սո՞ւս մարդաշէնեցէն, «ո՞ւ գու-  
նո՞ւ յեղ օսու ավարդնեցի հագուստնեցով և ներնեց  
յափշտակուղ գոյլեր են:

Իսկական բնութեամբ հեղ խռարհ, անդէն  
և անզօն է ոչխարին և ամեն ազգաց սիրելի և  
ունի ընտիր բերքեր, որք են կաթն, պանիր,  
իւղ բուրդ և այլն:

իսկական բնութեամբ գլուխուց յափշտական մասամբ և պնառելով գաղաճ է դայն։ Դայլերն աւելի հետամուտ են յափշտակել և պատառութել հօտից մօլորուած և բաժանուած ոչխարները և շատ անգամ վախում են ահազ գին գամփու շներից մօտենալ ոչխարի հօտերին։ Այս է պատճառն որ գոյլ բնութիւն ունեցող մարդուսներն մօտենում են ունիսը հորեալ քողարկուած, որպէս զի խարուեն հովիւներն ոչխար կարծելով և իւրեանք ոչխարազգեսաններն անեն իւրեանց որսը։ Դայլ և ոչխար քանի տարրեր են բնութեամբ։

Որպէս զի դիւրաւ կարողանանք որոշել ձշմարիտ մարդարէն կեղծ ճաշաւայէնց, «լաւառագիտար գայլէրը՝ իսկական ոչխարներից, նշնիտամուր ճարդուայը՝ ազգասէրից և Աստուծուց յուղարկուածը՝ ննինակու խուռացաւներից, Փըրկիչն տալիս է հետեւեալ նշանները։ «Ի պրայն նոցա ժանելջեւ պնառ, մէնէ առաջնուն է այս է նոցա պառուզներից կը ճանաչէք նոցա ինչ լինելը, միթէ խաղող կը քաղի՞ն վուշերից, միթէ թուզ կը քաշի՞ն տատասկից։ Եատ հեշտ է ոչխարի զգեստով մարդ խարելը, սակայն հեշտ չէ պրայն կեղծել կամ խարդախելը, քանզի խիստ զըժուար, մինչեւ իսկ անկարելի է առաջիրը գետնախնձոր ծախսել և նըւ(անպատուաստ) ուկու-

իրեւ տանձ։ Այսու ամենայնիւ ամենակարեւոր է մեզ վերջին ծայր զգոյշ լինել ամեն ըսպէ և ամեն ակնթարթ, ինչպէս տառմ է Յովհաննէս աստուածաբան աւետարանիչն։ «Սիրելիք, մի՛ հաւատաք ամեն հոգու, հասպա ընարեցէք հոգիները՝ եթէ Աստուծուց զըրկուած կը լինին, վասն զի շատ սուսպ ճարդարէնէր գուրսա եկած են աշխարհում» (Ա. Յովհ. Դ. 1)։ Այս, ամենակարեւոր է միշտ զգոյշ միշտ արթուն և միշտ զգաստ լինել, վասն զի ժակոտից վերասովին և յառեցուցիւ փուշեր ունին թէ չէն և թէ պատասխէն թուփերն, երկութին ևս արիւն թափող են, երկուքն ևս հագուստներ ծիւ ծիւ անող և պատառոտող են՝ ինչպէս մի անձի, մի տան անդամոց, նոյնպէս և մի ժողովրդեան անդամոց։ Ուրեմն կարելի՛ է փուշերից և տատասկներից բարի բան սպասել բացի վասակարներից։ Ուրեմն կարելի՛ է օգուտներ սպասել ոչխարազգեստ գայլերից, օգուտներ սպասել սուտ մարդարէներից, բարիք սպասել կեղծ ապրանքներից մարդարիտ, կեղծ մարդասիրութիւն և կեղծ եղբայրութիւն ծախողներից, ինչպիսիներից զգուշացնում է և Պօղոս սրբազան առաքեալն ասելով. «Զգոյշ կացէք, մէկն չլինի որ զձեզ կողոպտէ ճարտարմը ութեամբ, և սուտ խարէութեամբ, որք ճարդկան աւանդութեան համեմատ և այս աշ-

Խարհիս տարերաց (Նիւթ, զգալի իրեր) համեմատ և ոչ թէ Յիսուս Քրիստոսի (Հոդոյն համապատասխան խօսութերով), որովհետեւ մարմնապէս Յիսուսի մէջ բնակում է Աստուածութեան ամեն լրումն, և դուք լցուած էք նորանով՝ Որ գլուխ է ամեն իշխանութեան և պետութեան (Կող. Բ. 8—10):

Կան մարդիկ, որք պատուառ կերպով գողանում են մեռնելը, օրինակ շինում են վեթակներ (զանազան ձեռվ) մեղուների մուտքի չորս կողմերը օծում պառանի կոչուած քաղցը նիւթով՝ որ շինուած է մեղրով և ուրիշ քաղցը նիւթերով և փեթակները դնում անտառների բարձր քերծերի վերայ և որսում այլոց մեղուները: Ահա այսպէս են անում և սուտ մարգարէներն, խարեբաններն, սուտ առաքեալներն և մարդորսներն—պատրոզական խարեբայ և քաղցը խօսքերով և սնոտի խռապուճաներով քաղցրացնում են միամիտ լսողների բերանները, մոլորցնում մաքերը, պղտորում սրտերը, խախտում հաւատը և գերելով հոգիները որսում: Եթէ մեծ ցաւ է պատճառում դրամի և անասնոց կորուստն և գողութիւնն, որչափ ևս աւելի ցաւ պատճառելու է հոդու կորուստն և գողութիւնն, քանզի «Զի՞նչ օգտիցի մարդ՝ թէ զաշխարհս ամենայն շահեսցի և զանձն իւր տուժեսցէ, կամ զի՞նչ տա-

ցէ մարդ փրկանս անձին իւրոյ (Մատ. Ի. 26):  
Ուրեմն վերջացնելով խօսքս, սիրելի Հայ ժողովուրդ, կրինում եմ Փրկչի և առաքելոց խրատները. «Զգոյշ լերուք ի սուտ մարգարէիցըն, որ գան առ ձեզ հանդերձիւք ոչխարաց, և իներքոյ են գայլք յափշտակողք: Ի պտղոյ նոցա ծանիջիք զնոսա....» «Սիրելիք մի՛ հաւատաք ամեն հոգու, հապա ընարեցէք հոգիները եթէ Աստուածուց զրկուած են, վասն զի շատ սուտ մարգարէներ երեան եկած են աշխարհումն:» «Զգոյշ կացէք, ըմնի թէ մէկն զձեզ խարէ....» Աղօթում եմ, որ Փրկիչն զձեզ ազատ պահէ ամեն տեսակ սուտ մարգարէներից, ոչխարազգեստ գայլերից և մեղուագող մարգորսներից: ամէն:

### ՔԸՐԱՋ ԺԳ.

«Աղաչեմ զձեզ, եղբարք, գիտել զայն պիսիմն, որ հերձուածս և գայթակղութեւնս առնեցեն արտաքոյ վարդապետութեան զոր գուքն ուսայք, և խորշեցարուք ի նոցանէ: Զի այնպիսիքն Տեառն մերում Քրիստոսի ոչ ծառայեն. այլ իւրեանց որովայնիւն քաղցրաբանութեամբ և օրհնութեամբ պատրեն զսիրա անմեղաց» (Հռով. Ժ. 17—18):

Աղաչում եմ ձեզ, եղբայլներ, ձանաչել այնպիսիները, որ ձեր սովորած վարդապետութիւնից դուրս կանեն հերձուածներ և

դայթակղութիւններ. և հեռացէք նոցանից:  
Որովհետեւ այնպիսիններն չեն ծառայում մեր  
Տէր Յիսուս Քրիստոսին, այլ իւրեանց որո-  
վայնին և խարում են անմեղաց սրտերը ա-  
նուշ խօսքերով և գովելով:

Փորձառու հայրերն և մայրերն բազմից  
(շատ անգամ) աղաւնչով են զդուշացնում  
իւրեանց հոգեւոր և մարմնաւոր զաւակները—  
արական և իդական—հոգեկորուստ վտանգնե-  
րից: Այդպէս է անում և ու առաքեալն: Ա-  
ւելորդ է զբել մէկ զօրեղ ազդեցութիւն ունի  
լոող զաւակաց վերայ ծնողաց աղաւնչն, մա-  
նաւանդ սիրելի ծնողաց:

Եղբար բառով հասկանալու ենք ոչ միայն  
տան արականները, այլ և իդականները, վասն զի  
կարելի չէ տան կէսը կրթել և կէսը անկիրթ  
թողուլ կէսը խրատել քարոզել, զդուշացնել  
և միւս կէսը—իդականները թողուլ ան-  
խրատ, անքարոզ և առանց զդուշացնելու:  
Եթէ սխալուում է արականն, որչափ ևս  
աւելի իդականն:

Դիմուլ—ճանաւու այնպիսինները որ յեր սո-  
վորած վարդապետութիւններ կանեն հեր-  
ձուածներ և գոյնականներ: Ճշմարիտ ճա-  
նաչողութիւնից կախուած է մարդոց օդուան,  
կտանին և կենդանութենն, իսկ սխալ ճանաչո-  
ղութիւնից է առաջանում մարդոց վասն և

ժանի, Ձուելութիւնն և նյութիւնն: Եթէ մի  
անձի սխալ ճանաչողութիւնից թշուառանում  
է և ոչնչանում մի ամբողջ գերգաստան, մի  
ամբողջ գիւղ և մի ամբողջ ազգ, այսպէս էլ  
մի անձի ուղիղ ճանաչողութիւնից բախտա-  
ւորուում է մի ամբողջ գերգաստան, մի ամ-  
բողջ քաղաք կամ երկիր և մի ամբողջ ազգ:  
Որինակի համար մի Արքահամ Նահապետ  
իսկութեամբ ճանաչելով չշապչո Ապառածու-  
բախտաւորուեցան իւր ամբողջ գերգաստանն  
և Հրէից տոհմի: Իսկ միւս ազգերն, հետեւ-  
լով իւրեանց նահապետների սխալ ճանաչո-  
ղութեան, որք փոխանակած էին Ճշմարիտ  
Արքաիցը արարածոց հետո, զորս և պաշտած  
իրեւ աստուած, վերջին ծայր թշուառացան  
և անբան կենդանիներից աւելի անբանացան,  
ինչպէս գանգատում է Տէրն. «Ասիր երկինք,  
ականջ զիր երկիր, վասն զի խօսում է Տէրն,  
զաւակներ ծնայ և մեծացուցի և նոքա անար-  
գեցին զիս: Եզն ճանաչեց իւր ստացողը և  
էշն (Ճանաչեց) իւր տիրոջ գոմը, բայց իմ  
ժողովուրդն զիս չճանաչեց» (Ես. Ա. 2—3):  
Քանի քանի մարդիկ, քանի քանի գերգաս-  
տաններ և քանի քանի ազգեր ճանաչողու-  
թեանց մէջ յիմարաբար սխալուելով, կործա-  
նած են իւրեանց տուները և ազգութիւննե-  
րը: Ահաւասիկ սորա համար է զդուշացնում

ս. առաքեալն զմեզ, որ իսկոյն և եթ չհաւատանք մեր ամեն տեսածին և լսածին, իսկոյն և եթ հալած իւղի տեղ չընդունենք ինչ որ կեղծ է և շինծու, ինչի նպատակն ուրիշ է և մեր տեսածն և լսածն ուրիշ. վերջապէս երբ որ մեր մտաց հեռատեսութիւնն չէ կարողանում թափանցել և կշռել որ և է գործի օգուտը կամ վնասը, կենսաբեր կամ մահաբեր լինելը, բարեզք է բնաւ չհաւատալ: Քանզի հաւատքն լսելուց է առաջանում, լսելն խօսքից և խօսքն մարդից:

Դեռ շատ տարիներ առաջ Հայաստանեայց առաքելական և ս. եկեղեցու մաքուր և անբիծ դաւանութեան համար գրած է Յովհանն Երզնկացին. «Ով Հայոց եկեղեցի, չնուազեցաւ քո ուղղափառ հաւատոյ լոյսն. քո բարի ցորենի սերմանց մէջ չխառնուեցաւ որո՞ն. քո աւանդութեանց յստակ աղբիւրը չպղորեց օտարոտի ուսմանց դառն ջուր. քո Ճշմարիտ, ստոյգ և կենդանի հացին մէջ չչաղախուեցաւ մեռելական խմոր և չար քացախի հերձուած. քո անարատ ոսկի հաւատիդ և լուսատեսիլ գաւանութեանդ մէջ չգտնուեցաւ ժանդահոտ պղինձ և սեագոյն կապար:» Գրած է և Ասորոց Պատրիարքն. «Այլ եթող մեզ շնորհ զթութեանն Քրիստոսի զաւակ կենդանութեան և սերմն

ազնուական աճման սրբութեան զկոյսն սուրբ՝ զեկեղեցին Հայաստանեայց, զսնեալն յանախարիմատոյն և զպակեալն ի նմին իսկ ի Փրկչէն մերմէ անդրանիկ հաւատով ի ձեռն Աբգարու, որ ունէր զՀայս և զԱսորիս» (Միկայէլ Ասոր. Յաղ. քահան. եր. 27—28):

Արդ՝ Քրիստոսի առաքեալն աղաչելով պատուիրում է մեզ ոչ միայն անխախտ պահել Հայաստանեայց առաքելական և ս. եկեղեցու անբիծ հաւատը և դաւանութիւնը, զորս և զովում են ուրիշները, այլ և ճանաչել այնպիսիները, որք այդ դաւանութիւնից դուրս խճորեալ վարդապետունիւն անելով՝ բաժանուհեր կը ձգեն մեր ս. եկեղեցու մէջ և կը գայթեահեցնեն միամիտները:

Հետացէ+ նոյանէց. Ուրիշ տեղ ասած ենք որ հոգին գերազանց է մարմնից: Արդ եթէ մարդիկ այնքան զգուշանում են մարմնաւոր զողերից, աւազակներից, եթէ մարդիկ միշտ հեռանում են մարմննը խածնող օձերից, կարիճներից և մորմերից, ո՞րչափ ևս առաւել զգուշանալու և հեռի մնալու են հոգեար գուշինց, հոգեար օչերէց, հոգեար կարէներից և հոգեար մարմներից, որք գողանում են հոգիներ, խածնում և սպանում հոգիները և գայթակեցնում միւսները:

Հետացէ+ նոյանէց, ոյտինեալ այսպիսիներ-

վեն ժամայում մեր Տէր Յիսոսո Քրիստոսին, այլ  
իշխանց որովայնին: Եւ որովհետեւ Քրիստոսին  
չեն ծառայում այդպիսեներն, այլ իւրեանց  
որովայնին փորին-ուրեմն: Զի բազումք գնան,  
զորոց բազում անգամ ասեի ձեզ, բայց արդ  
և լալով իսկ ասեմ, զմշնամեաց Խաչին Քրիս-  
տոսի, որոց կատարածն իորուայ է, որոց առ-  
առածն որովայն իշխանց է և փառքն՝ աճըն  
իշխանց, որք զերկրաւորս և եթ խորհին»  
(Փիլ. Գ. 18—29): Այս, այդ կողապաշտներն  
սերմանում են մոլորութիւններ, ուզիղ հա-  
ւատից և դաւանութիւնից ծոռւմ են միա-  
միտները, պղտոր վարդապետութեամք պատ-  
րում են մտքերը, թունաւորում սրտերը,  
խախտում հաւատը, գողանում հոգիները,  
հասարակութեան մէջ ձգում՝ գոյնակնուն  
և բաժանում եկեղեցուց, պապենական յիշա-  
տակարաններից, սրբութիւններից և ուզգա-  
փառ դաւանութիւնից շատերը: Հեռացէք,  
հեռացէք այդպիսիներից: Հեռացէք որովայ-  
նապաշտներից, հեռացէք այդպիսի<sup>4</sup> աղան-  
դաւորներից: Հաստատուն պահեցէք ձեր սուրբ

<sup>4</sup> «Ձեթից կակուզ էին նոցա խօսքերը, բայց  
նոքեանք էին ինչպէս սլաք—սուր սրուած—»  
(Սաղ. ԾԳ. 21):

հաւատը, անխմոր դաւանութիւնը, ճշմարիտ  
ասաուածպաշտութիւնը, պապենական լեզուն,  
հայրենի յիշատակները և հայ մարտիրոսների  
արեամբ ներկուած և ցարդ սուբբ պահուած  
Եկեղեցին և հայութիւնը: Տէր Յիսուս Քրիս-  
տոս միշտ ձեզ հետ լինի հանապագ. ամէն:

### ՔԱՐՈՉ ԺՊ.

Մեղաւոր կինն (Մատ. ԻԶ, 6—13,  
Մար. ԺՊ, 3—7, Ղուկ. Է. 36—47.  
Յով. ԺԲ. 1—8):

Երբ Յիսուս Բեթանիայում բորոտ Սի-  
մոնի տան մէջ սեղանի վերայ հացի նստած  
էր, մի կին եկն և բերաւ մի շիշ թանկագին  
և աղնիւ նարդոսի իւղ (անուշահոտ ջուր)՝  
կոտրեց շիշը և թափեց Յիսուսի գլխին և  
ինքն Քրիստոսի ետեն կանգնած նորա ոտքե-  
րի մօտ լաց էր լինում, իւր արտասունքնե-  
րով թրջումէր Փրկչի ոտները և իւր գլխի մա-  
զերով սրբում, համբուրում էր նորա ոտ-  
ները և իւղով օծում: Երբ տեսան աշակերտ-  
ներն, բարկացան և առում են. ի՞նչի համար  
կորսուեցաւ այդ իւղն, որովհետեւ կարելի էր  
ծախել այդ թանկ գնով և տալ աղքատներին:  
Գիտաց Յիսուս և առում է նոցա, ի՞նչու հա-  
մար վշտացնում էք այդ կինը, դա մի բարի  
գործ գործեց իմ վերայ. աղքատները ամեն

Ժամանակ ձեզ հետ ունիք, բայց զիս ամեն ժամանակ չունիք ձեզ հետ: Դորա այդ իւղը իմ մարմնոյ վերայ թափելն նշանակեց իմ ժաղումն: Բայց ճշմարիտը ասում եմ ձեզ, որ և կը քարոզուի այս աւետարանս բոլոր աշխարհում կը խօսուի դորա յիշատակն ինչ որ արաւ դա:

Եեթանիան այժմ մի գիւղ է, որ գըտնում է Երուսաղէմի արևելեան կողմում Համբարձման սարի արևելահարաւ լանջի վերայ: Այս գեղից էին Ղազար, և իւր քոյրերն Մարիամ և Մարթա և բորոտ Սիմոն, որն կանխաւ արդէն բժշկուած էր Փրկչից իւր այդ ախտից: Ախմօն Փարիսեցիներից էր և երեխ թէ ի նշան Երախտազիտութեան հրաւիրած էր Յիսուսը ընթրիքի կամ Ճաշի:

Աստուածամարդ Փրկիչն ունէր մի գերազանց և ամենաբարի յատկութիւն, որ յատուկ էր միմիայն իւր բնաւորութեան, այս է զիշեր և ցերեկ, ամեն ժամ և ամեն ըոսէ միշտ բղխում էր իրենից ողբանունիւն, գլունիւն, կեանէ, կենդանունիւն. որբանիւն, ընպանունիւն, ներսունունիւն և այն ամեն հոգեւոր ունարժուածուն առաջնունիւն և բարիւն, որոց պէտք ունի մարդկային տկար բնութիւնն: Այդ բոլոր մարդասիրութիւնները մանաւանդ առատութեամբ և անաշառապէս գործ էր դնում

այն ժամանակ, երբ իրան դիմողներին մէջ գտնում էր կատարեալ հաւատք, կատարեալ դղջումն և կատարեալ փափագ: Տէրն այդ ձրի շնորհքները բնաւ չեր զլանում և զղջացեալ գողերից, աւազակներից, մարդասպաններից և ամեն տեսակ յանցաւորներից:

Մեղաւոր կինն, որ Ղազարոսի քոյր Մարիամն էր, զգալով իւր չափազանց մեղաւորութիւնը և լսելով Փրկչի գթութեան մասին, հաւատով գիմեց Նորան, որի գլխի վերայ կոտրեց շիշը և թափեց Յիսուսի մազերին այն թանկազին նարգոսի անուշահոտ օծանելիքը և ջրի մի մասովն էլ օծեց Փրկչի ոտքերը<sup>4</sup>: Մարիամ ոչինչ չասաց ոչինչ շխուեց, ոչինչ չխնդրեց Փրկչից: Բայց շարունակ լաց էր լինում լուռ ու մունջ, շարունակ թափում էր առատ արտասուք: շարունակ արտասուք թրջում էր Յիսուսի ոտները և շարունակ իւր երկար մազերով սրբում թրջած ոտները: Որովհետեւ Մարիամի ներսում վառուած էր լորձմտանքի խիսա կրակ, եռացեալ կաթսայի (զազան) պէս եռում, եփում էր սաստիկ զրդջումն, քթածակերից դուս էր ածում ձննածերը (քաֆը) և աչքերից՝ եռման ջուրեր:

<sup>4</sup> Նոյն ժամանակի սովորութեամբ չոքած էր հաց ուտում Յիսուս, որի ոտներն բնականաբար ետեսի կողմումն էին և առանց դուլպայի:

Մարիամ՝ մինակ շիշը չէր կոտրել, այլ կոտրել էր իւր չարին հակամետ կամքը, կոտրել էր մեղաց հետեւող իւր միաքը, վերջապէս կոտրել էր չար սովորութեան շիշը: Նարունակ լաց էր լինում, արտասուօք թրջում Տիրոջ ոտները, սրբում իւր մազերով և միշտ համբուրում նորա ոտները անդադար:

Սիմոնի տան մէջ մինակ Յիսուս չէր նըստած ճաշի կամ ընթրիքի, այլ և առաքեալներն և գուցէ ուրիշ մարդիկ և տան տէրն (և իւր գերդաստանն և Ղաղարն): Հետեւելով աւետարանիչների գրածներին, գլխաւորապէս նշմարուում են այդ ամեն անձանց մէջ Երեւանեսակ կիրք—որք են մեղքից քաւելու ճըգնաժամ Մարիամի կողմից, խորին ցաւ մատնիչ Յուղայի կողմից և սաստիկ գայթակղութիւն տան տիրոջ Սիմոնի կողմից: Որովհետեւ Մարիամ հաւատում էր՝ որ Յիսուս կարող էր իրեւ Աստուած ներել և ջնջել իւր անթիւ մեղքերը՝ տեսնելով իւր կատարեալ զղջման արտասուքները: Մատնիչն չափազանց ցաւ զգաց որ զրկուեցաւ անուշահոտ ջրի փողերից. քանզի աւետարանիչն ասում է. «Այն աշակերտներից մին—Յուղա Խսկարիովացին, որ մատնելու էր դնա (Յիսուս) ասում է. «Ի՞նչու համար այդ իւղը չծախուեցաւ երեք հարիւր դենարի և տրուեցաւ աղքատներին:

Այս ասաց Յուղան, ոչ թէ աղքատներին համար էր իւր հոգն, այլ որովհետեւ գող էր և ինքն էր պահում Առաքելոց գանձանակի դրամարկղը» (Յով. Ժ.Բ. 4—6): Աղքատներին ինամք տանիին պարտաւորութիւն է անշուշտ: Յիսուս պատաժիսանում է Յուղային. «Թող տուէք դորան (այդ կնոջ), ի՞նչու էր վըշտացնում (գորա սիրաը) դա մի բարի գործ գործեց իմ վերայ: Աղքատները ամեն ժամանակ ունիք ձեզ հետ, երբ կամենաք, կարող էք բարիքներ անել նոցա. բայց զիս ամեն ժամանակ չունիք ձեզ հետ: Այդ կինն (Մարիամ) ինչ որ ունէր արաւ. առաջուց խընկեց իմ մարմինը ի նշան պատանաց . . . ամեն տեղ կը խօսուի այդ կինը յիշատակելու համար» (Մարկ. Ժ.Դ. 6—9):

Տան տէր Սիմոնն սաստիկ գայթակղուած էր <sup>4</sup> Քրիստոսի վերայ, այս պատճառաւ ասում էր իւր մաքում. «Սա (Քրիստոս) թէ մարգարէ մէկն էր, ուրիշն գիտէր թէ ով և ինչպիսի կին մօտենում է իրան (Յիսուսին): Փրկիչն իսկոյն իմանալով նորա մտից անցածը՝ ասում է. «Սիմոն . . . տեսնում ես այս կինը, մոռայ քո տունն, ոտքերս չլուացիր. իսկ այս կինն իւր արտասունիքներով թրջեց

<sup>4</sup> Թերես և ուրիշ Փարիսեցիներ ես:

իմ ոտները և սրբեց իւր մաղերով։ Դու  
չհամբուրեցիր զիս, սա չդադարեց ոտքերս համ  
բուրելուց մտած բոպէից ցարդ։ Իւդով չօ-  
ծեցիր իմ գլուխը։ սա օծեց անուշահոտ իւ-  
դով<sup>1</sup>։ Վասն որոյ ասում եմ քեզ։ «Թողուած  
լինին այս կնոջ շատ մեղքերն։ Ապա խօսքը  
Մարիամին ուղղելով՝ ասում է։ «Թողեալ լի-  
ցին քեզ մեղք քո . . . հաւասա քո կեցուցին  
զքեզ, երժ ի խաղաղութիւն» (Ղուկ. Է.  
40—50)։

Ա՛յս, ի՞նչպէս հասկացնեմ ձեզ, սիրելի  
եզրայրներ և քոյրեր և սիրելի զաւակներ։  
Փրկիչն միշտ ասում էր համարեալ թէ։ «Բը-  
ժեշն հարկառոր է հետանդաց համար և ոչ թէ  
առողջների համար»։ «Ես եկած եմ մեղա-  
ւորաց համար և ոչ թէ արդարոց»։ Այս  
պատճառաւ էլ միշտ շրջում էր ոտքով քա-  
ղաքից քաղաք, գիւղից գիւղ, աւանից աւան  
և շինից շին, բժշկում հոգւով և մարմնով  
հիւանդները, ցաւադարները, աչօք և մտօք  
կոյրերը։ Բայց ի՞նչ անես. չարն ու բարին,  
որոմն ու ցորենն միասին են աճում։ Ի՞նչ  
անես, որ չեն պակասում մարդկութեան մի-  
ջից մասնիչ Յուղայի նման մարդիկ, որք միշտ

<sup>1</sup> Սովորութիւն էր, մաքուր լուանում էին  
եկած հեւը ոտները, օծում՝ գլուխը և համբուր-  
ուում նորա հետ։

մտածում են մի լիայն իւրեանց նիւթականի  
մասին։ և Սիմոնի և Փարիսեցւոյ նման մար-  
դիկ, որոց աչքերի և մաքերի տեսութիւնն  
միայն տեսնում են արտաքինները։ Փրկիչն, որ  
միշտ նայում էր մարդոց սրտին, հաւատովին և  
փափառին, տեսաւ Մարիամի կոտրած սիրաը.  
կարդաց նորա մէջ ձշմարիտ զղջումը, հաւատ-  
քի մեծութիւնը, մեղքից զզուումը, արդա-  
րանալու փափագը, իսկոյն իբրեւ Աստուած  
ներեց նորա շատ մեղքերը, բժշկեց նորա  
վիրաւոր հոգին, կոտրած սիրաը, տանջուած  
միաքը և արդարացյնելով ձանապարհ զրաւ։  
Քանի քանի մեղաւոր կանայք և մարդիկ  
Մարիամի պէս ի բոլոր սրտէ զղալով՝ մի  
բոպէում արդարացան իսկոյն և եթ։ Այս-  
պիսի ոմն էր շնութեան վերայ բոնուած  
կինն (Յով. Է., 3—11), Զաքէոս (Ղուկ. ԺԹ.  
2—10), անդամալոյցն (Մար. Բ. 10—11),  
աջակողմեան աւաղակն (Ղուկ. ԻԳ. 11—13),  
Պետրոս և Պողոս առաքեալներն, (Մար.  
ԻԳ. 75. Մար. ԺԳ. 72. Ղուկ. ԻԲ. 61—  
62) և լուսաւոր շատ աղաջում, թափան-  
ձում է որ Աստուած ցոյց տար իրան ամե-  
նից Ձեղառոր և արդար մարդը։ Աստուածոյ հը-  
րեշտակն մի առաւօտ ձգնաւորին ցոյց է տա-  
լիս մի հարդ, որ իւր փաքրիկ որդու հետ

Մի ձգնաւոր շատ աղաջում, թափան-  
ձում է որ Աստուած ցոյց տար իրան ամե-  
նից Ձեղառոր և արդար մարդը։ Աստուածոյ հը-  
րեշտակն մի առաւօտ ձգնաւորին ցոյց է տա-  
լիս մի հարդ, որ իւր փաքրիկ որդու հետ

գնում էր անդ և ասում է, «Այս մարդն է աշխարհիս ամենից թղթառն» և նոյն երեկոյին անդից գարձող մի և նոյն մարդը ժոյց տալով ասում է. «Սա է աշխարհիս ամենաարդար մարդն»: Ճգնաւորի թախանձանքից ստիպեալ խոստովանում է թղթառ—արդար մարդն այսպէս. «Առաւօտեան անդն զնալիս երեխան տեսաւ մի խիստ մեծ աւազակոյտ և ինձ ասաց. «Հայր, արդեօք այս աւազից շատ բան կը լինի»: —Պատասխանեցի. «Այո. որդիս, իմ մեղքն աւելի շատ է այդ աւազից»: Երախան, չկարողանալով զսպել զինքը, սկսաւ լալ իմ մեղաց շատութեան համար, երկար լացի և ես: Այս այս է ամենն»:

Այժմ, Հայոց հայրեր և մայրեր, եղբայրներ և քոյրեր, տեսաք թէ որքան զօրաւոր է արդասաւոն, տեսաք թէ արդասաւոն ինչպէս շարժում է Աստուծոյ բարկութիւնը դէպի քաղցրութիւն, պատիժը դէպի ներումն մեղաց, և միանգամայն վերանորոգում է մեղաւորը դէպի արդարութիւն: Ուրեմն ամենքս էլ ի բոլոր սրտէ զղջանք մեր մեղքերը, և աշխատենք առանց ժամանակ կորուսանելու ձեռք բերել մեր հոգու, մտքի, զգացմանց և սրտի վերանորոգութիւնը՝ շնորհիւ մարդասէր Փրկիչ և վերանորոգիչ Յիսուս Քրիստոսի, որում փառք յաւիտեանս, ամէն:

### ՔՐԻԱԶ ՌԵ.

«Ո՞ արար զՀրեշտակս իւր հոգիս և զպաշտօնեայն իւր բոց հըոյ» (Երբ. Ա. 7):

Կարեւոր համարուեցաւ տալ մի դաղավար և Հրեշտակաց մասին: Որքան դժուարին է ազբով չտեսած առարկայի մասին խօսել կամ ճառել ինչպէս ասում է Սոլոմոն իմաստունն. «Հազիւ թէ տեսնում ենք երկրաւոր իրերը և աշխատութեամբ ենք կարողանում գտնել մեր ոտքերի տակ եղածները խսկ ինչ որ երկնքումն է, ով կարող է քննել.» (Խմա. թ. 16—17) Այսու ամենայնիւ հարկ համարուեցաւ հաւաքել ո. Գրքից պէտք եղածը և դասաւորել այս տեղ յօդուած Հայ միրելի ժողովրդականաց և հետաքրքիր կարգացողաց:

Աստուծութիւնն հրեշտակները ձեռքով ստեղծած չէ մարդոց նման, այլ ստեղծած է խօսքով ոչնչից. «Ասաց և եղին. հրամայեաց և հաստատեցան» (Սաղ. 1.Բ. 9. Նեկմ. թ. 6. Կող. Ա. 16):

Հրեշտակներն ստեղծուած են Աստուծութիւնից ինչպէս լուսից լոյս և հրեղին կրա-

կից հրեղէն կրակ՝ անմարմին՝ հոգիներ. «Ո՞ւ առար զհրեշտակս իւր հոգին և զպաշտօնեայս իւր ի հուր կիզելոյ» «Որ յանէից ստեղծեր զպաշտօնեայս քո ի հուր կիզելոյ, հուրդ անեղական» (Նարակ. ձԲ):

Մի քանի աստուածաբանների կարծիքն այն է թէ մարդից առաջ ստեղծուած են Հրեշտակներն: Կարծիքներն հիմնուած են Յովբայ (Լ. 7) սոյն խօսքի վերայ. «Յորժամ եղեն աստեղը ծերք, ամենայն Հրեշտակը աստեղաց օրհնեցին զիս մեծաձայն և ամենայն Հրեշտակը իմ գովեցին զիս:»

Հրեշտակներն երկու տեսակ են — բարի հշելուակներ և լոր հշելուակներ: Նորա են բարի Հրեշտակներն, որը իմանալով իւրեանց ազատութեան յարդը՝ հաւատարիմ մնացին իւրեանց Արարչի ծառայութեան մէջ, վասն որոյ կոչեցան որդիւ Աստութոյ, որդիւ լուսոյ, անդրանիկ էին լուսոյի, «պատառութոյ Աստութոյ, պատրժամատութոյ, դեսպանութոյ», դեսպանութեան և հոգեղէն էաներ, օրհնարանող ամենատուրք երրորդութեան, կամակատար կամաց Աստութոյ և անդադար փառաբանող իւրեանց Սաեղծողը և հշելուակնաց պիտունութեան:

Զար Հրեշտակներն նորա են, որը չարաշար գործածելով իւրեանց ազատութիւնը, ազատ կամօք հպարտացան, ազստամիեցին Աստութոյ դէմի վար թափուեցան երկնքից,

վասն որոյ կոչեցան որդիւ գլուխուի, որդիւ խառարի, այս լոր, ուլ, լոր ոգիւ, և լուկ սոցագլխաւորն կոչուում է Սառայէլ Բէեղեղեռուց վիշտու, օյ, բելիար, և լու:

Բարի Հրեշտակներն միշտ գործում են յօգուտ մարդոց, իսկ լոր Հրեշտակներն ի վնաս մարդոց:

Բարի Հրեշտակներն անթիւ են և անհամար, որոց թիւը գիտէ միայն Սաեղծողն: «Եւ տեսայ և լսեցի շատ Հրեշտակաց ձայն, որ կային Աստութոյ Աթոռի չորս կողմերում... նոցաթիւն էր բիւրք բիւրոց և հաղար հազարաց» այսինքն անգիտելի հոռվիշնաց (Յայտ. Ե. 11. թ. 16. Երբ. ԺԲ. 22—23 և Դան. Է. 10):

Ըստ վկայութեան ս. Գրոյ՝ ամբողջ բարի Հրեշտակներն ինն զասակարգ են — Ա. Բ. Ա. +, Ք. Ե. Ա. Հ. Է. +, Ս. Ե. Ա. Հ. Է. +, Զ. Ե. Ա. Հ. Է. +, Ի. Հ. Ա. Հ. Է. +, Պ. Ե. Ա. Հ. Է. +, Հ. Ե. Հ. Է. +, և Հ. Ե. Հ. Է. +: Սոցանից իւրաքանչիւր դասակարգ ունի իւր առանձին պաշտօնը, զորս անխափան կատարում են ամենայն յօժարութեամբ և սիրով:

Ա. Դասակարգն կոչուած է Ա. Բ. Ա. +, որոց պաշտօնն է ծառայել Աստութեան ինչպէս աթոռներ, այս է Աստութեան միշտ բազմելով սոցա թերի վերայ՝ ինչպէս Հրեղէն աթոռների վերայ՝ հանգստանում է.

«Աթոռ» քո Աստուած յաւիտեանս յաւիտեանց, դաւազան ուղղութեան, դաւազան արքայութեան քո (Սաղ. ԽՊ. 7). դասակարգիս մասին խօսելով ասում է Եղեկիէլ մարդարէն (Ս. 1—28) «և տեսայ (հրեշտակներ) որք ունէին չորս ջորս թեւեր, երկուսով ծածկում էին իւրեանց մարմինը<sup>1)</sup> և երկուսով թռչում։ Սոքս ունէին կերպարանք հարդայ, կերպարանք առեւծու, կերպարանք եւլին և կերպարանք արծայ, որոց թեւերի վերայ նստած էր Տէրն ինչպէս ամպի վերայ, որից տարածուում էր չորս կողմերն լոյս և փայլատակում էր կրակ։»

Բ. Դասակարգի հրեշտակներն կոչուում են Ետոդալէայ +Երւլէէ+ շատ աչքեր ունենալու պատճառաւ, որը վառուում են ինչպէս կրակ և փայլում ինչպէս թանկագին ակունքներ։ Քերովբէներն ունէին վեց վեց թեւեր, երկու թեւով ծածկում էին իւրեանց ոսքերը, երկու թեւով՝ երեսները և երկու թեւով թռչում էին . . . «Տեսնում էի որ օդի միջով թռած գալիս էին քերովբէներն, քերովբէների վերայ կային աթոռներ և այն աթոռների վերայ նստած էր Սագայի Աստուածն — ամենակարող Աստուածն, որ եկաւ մոտ Տաճարն, որն լցաւ

1) Հրեշտակներն անմարմին են. հասկանաւու է որ ծածկում էին իւրեանց անձը։

Աստուծոյ փառքով։ Տէրն երկինքն դառնալու ժամանակ տեսայ որ իւրաքանչիւր քերովբէի մօտ կային չորս անիւ, որոց մէջ և ուրիշչորս անիւ, որպէս թէ անիւ անւոյ մէջ, որովք արագապէս երկինք դարձաւ Տէրն» (Եղեկ. Ժ. 1—22):

«Կառք Աստուծոյ բիւրապատիկը, հազարք ուղղված և տէր ի նոսա» (Սաղ. Կէ. 18). «Ել ի քրովբէս և թռեաւ սլացաւ նա ի թեւս հողմոց» (Սաղ. Ժէ. 11):

Գ. Դասակարգի հրեշտակներն կոչուում են Սէրովլէէ+։ Դասակարգիս պաշտօնն է միշտ գտնուիլ աստուածութեան աթոռի շուրջն և արքայացութամբ անգագար օրհնել, գովիել և փառարանել ս. Երբորդութիւնը. վասն որոյ կոչուում են արքայաց Սէրովլէէ+։ Ոզիա թագաւորին մեռած տարին տեսայ Տէրը նստած իւր բարձր աթոռի վերայ և տունն լցաւ նորա փառքով։ Սերովբէներ կային նորա շուրջը շրջապատած, ամեն մի սերովբէ ունէր վեց թեւ, երկուսով ծածկում էին իւրեանց երեսները, երկուսով՝ իւրեանց ոսները և երկուսով թռուցեալ։ Աղաղակում էին մի առ մի և ասում։ Ոուրբ. Սուրբ. Սուրբ. Տէր զօրութեանց, ամեն երկիր լի է նորա փառքով։ Եւ այն աղազակի ձայնից բացուեցաւ դուռնն և տունն լցաւ ծիսով։ Եւ ասում եմ. վա՛ ինձ,

Ես մեղաւոր մարդ եմ, ինչպէս մնացել եմ զարմացած, որովհէետև ես մարդ եմ և ունիմ պիղծ շրթունքներ և բնակած եմ պղծաշուրթն ժողովրդեան մէջ և իմ աշքով տեսայ զօրութեանց տէրը: Ուղարկուեցաւ ինձ մօտ այն սերովբէներից մին, որ իւր ձեռքում ուներ կայծակը, որը ունելիով (մաշա) բռնած այն սեղանից՝ բերաւ մօտեցուց իմ բերանին և ասում է. աշաւաղիկ մօտեցաւ այդ քո շըրթունքներին, կը հանէ քո անօրէնութիւնները և կը հեռացնէ քեզնից քո մեղքերը» (Ես. 9. 1—9):

Դ. Դասակարգն կոչուած է Տէրութիւն+.  
Ե. » » Զօրութիւն+.  
Զ. » » Իշխանութիւն+:

Սոցա պաշտօնն է անդադար օրհնել, դովել և փառաւորել Աստուածութիւնը: Պօղոս սրբազն առաքեալն ասում է. Յիսուս Քրիստոսով «Հաստատեցաւ ամենայն . . . եթէ աթոռք, եթէ տէրութիւնք, եթէ պետութիւնք, եթէ իշխանութիւնք . . .» (Կող. Ա. 16. Եփես. Ա. 21. Ա. Պետ. Գ. 22):

Է. Դասակարգն կոչուած է Պէտութիւն+:  
Յիսուս Քրիստոսի համբարձման ժամանակ այս դասակարգի հրեշտակներն ազդարարում էին Իշխանաց դասակարգին, որ ձանապարհ բաց անէին Յիսուսի համար՝ սսելով. «Համբարձք

Իշխանք զգրունս ձեր ի վեր, համբարձցին դրունք յաւիտենից և մացէ թագաւոր փառաց: » Իշխանաց դասակարգն զարմացած հարցնում է Պետութեանց դասակարգին Քրիստոսի մասին. «Ո՞վ է սա թագաւոր փառաց, տէր հզօր զօրութեամբ իւրով, տէր կարող ի պատերազմի: » Իշխանաց դասակարգն պատասխանում է. «սա ինքն է թագաւոր փառաց» (Սաղ. ԻԳ. 8—10): Եսայի մարդարէի ԿՊ. զլիսի համար 1—6 երկում է որ Յիսուս Քրիստոս ինքն է պատասխանում Իշխանաց դասակարգին ասելով. «Հնձան հարի միայն... կոխեցի զնոսա սրտմտութեամբ և Ճմլեցի զնոսա բարկութեամբ և իջուցի յերկիր և զամենայն հնդերձս իմ թաթաւեցի: » Բարձր դասակարգի հրեշտակներն աեղեկութիւն չունեին որ Աստուծոյ միածին որդին երկնքից երկիր իջած է. չգիտէին թէ մարմին առած, խաչուած, թաղուած, յարութիւն առած և երկինքն է համբառնում: Բայցի սոցանից մինչեւ այդ ժամանակ փակուած էր երկինք և ոչ մի հողեղէն տակաւին մամնով և յաղթական փառքով չէր մտած երկինք, մանաւանդ շրջապատուած անթիւ հրեշտակներով: Այս պատճառաւ զարմացած հարցնում է իշխանաց դասակարգն Յիսուսի յաղթական երկինք մտնելու մասին, առ ոչ է. Քարուց Եակառություն Ձնու գիտեն, ոչ

Ե-Ե Ա-Յ-Ո-Ւ-Ն-Ե-Ր-Ե Հ-Ե-Ր-Ա-Յ Շ-Ա-Մ-Ջ-Ա-Յ Ե Ե-Ր-Ի-Ւ-Ն-Ե-Յ : Պ-Ա-Տ-Ա-Կ-Ա-Բ-Ա-Ն-Ո-ւ-Մ Է Վ-Ե-Ֆ-Ո-ւ-Թ-Ե-Ա-Ն-Ե Պ-Ա-Ս-Ա-Կ-Ա-Բ-Գ-Ն Ժ-Ե Ա-Ա-Ջ-Ե Լ-Ն-Ե-Յ Հ-Ա-Ր-Ա-Կ-Ա-Բ-Ա-Ն-Ե Ե, ո-Ր Մ-Ա-Բ-Դ-Ա-Ն-Ա-Լ-Ո-Վ յ-Ա-Ղ-Ջ-Ե-Գ մ-Ե-Ղ-Ջ, ի-Ն-Ք-Ն-Ա-Գ-Ո-Ր ի-շ-Խ-Ս-Ա-Ն-Ո-ւ-Թ-Ե-Ա-մ-Բ-Ա-Լ-Ե-Ր-Ե-Գ դ-Ժ-Ո-Խ-Բ-Ր-Ջ պ-Ա-Ս-Ա-Ե-Գ բ-Ա-Ն-Դ-Ա-Ր-Կ-Ե-Ա-Լ հ-ո-Գ-Ի-Ն-Ե-Ր-Ջ Չ-Ա-Խ-Ձ-Ա-Խ-Ե-Գ ս-Ա-Տ-Ա-Ն-Ա-Յ-Ի գ-լ-ո-ւ-Խ-Ը և ա-հ-ա-դ-ա-ր-ձ-ե-ա-լ գ-ն-ո-ւ-մ է բ-ա-զ-մ-ե-լ-ո-ւ ի-ւ-ր ա-թ-ո-ո-ն-ե-ր-ի վ-ե-ր-ա-յ՝ ա-մ-ե-ն կ-ո-ղ-մ-ի-ց յ-ա-ղ-թ-ա-կ-ա-ն փ-ա-ռ-ք-ո-վ :

Բ. Հ-Ե-Ղ-Ջ-Ա-Կ-Ա-Պ-Ե-Թ-Ա-Յ Պ-Ա-Ս-Ա-Կ-Ա-Բ-Գ, ո-ր-ի գ-լ-ս-ա-ւ-ո-ր-ն-ե-ր-ն ե-ն Գ-Ա-Բ-Բ-ի-է և Մ-Ի-Ք-Ա-յ-է լ հ-ր-ե-շ-տ-ա-կ-ա-պ-ե-տ-ն-ե-ր-ն: Խ-ն-չ-պ-է-ս ս- գ-ը-ր-ի-ց ե-ր-ե-ո-ւ-մ է, Գ-Ա-Բ-Բ-ի-է լ հ-ր-ե-շ-տ-ա-կ-ա-պ-ե-տ-ն Ա-ս-ո-ւ-ծ-ո-ւ-ց ո-ւ-զ-ա-ր-կ-ո-ւ-ո-ւ-մ է ա-ւ-ե-տ-ե-լ-ո-ւ — ա-չ-ք-ա-ր-յ-ս տ-ա-լ-ո-ւ — մ-ա-ր-դ-կ-ո-ւ-թ-ե-ա-ն մ-ե-ծ շ-ո-ր-հ-ը-ն-ե-ր-յ ո-ր-պ-ի-ս-ի-ն է Յ-ո-վ-հ-ա-ն-ն-է-ս Մ-կ-ր-ա-չ-ի և Ք-ր-ի-ս-տ-ո-ս-ի ծ-ն-ն-դ-ե-ա-ն ա-ւ-ե-ր-ո-ւ-մ-ն-է: Ը-ս-տ ո-մ-ա-ն-ց Գ-ա-ր-ր-ի-է լ-ե-ա-ն Պ-Ա-Ս-Ա-Կ-Ա-Բ-Գ-ն է-ր, ո-ր բ-ա-ր-ձ-ր-ա-գ-ո-չ փ-օ-ղ-ե-ր-ո-վ ա-զ-դ-ա-ր-ո-ւ-մ է-ր Խ-ո-ր-ա-յ-է-լ-ի ժ-ո-ղ-ո-վ-ր-դ-ե-ա-ն Ա-ս-ո-ւ-ծ-ո-յ ն-ե-ր-կ-ա-յ-ո-ւ-թ-ի-ւ-ն-ը Ս-ի-ն-ա ս-ա-ր-ի վ-ե-ր-ա-յ, ա-հ-ե-ղ-ա-գ-ո-չ փ-օ-ղ-ե-ր-ա-վ ա-ւ-ե-տ-ե-լ-ո-ւ է և զ-ա-տ-ա-ս-ա-ն-ի օ-ր-ո-ւ-մ Յ-ի-ս-ո-ւ-ս Ք-ր-ի-ս-տ-ո-ս-ի ե-ր-կ-ր-ո-ր-դ գ-ա-լ-ո-ւ-ս-ո-ը և հ-ա-ս-ա-ր-ա-կ-ա-ց յ-ա-ը-ո-ւ-թ-ի-ւ-ն-ը, «վ-ե-ր-ն-ա-կ-ա-ն զ-օ-ր-ա-ց-ն պ-ի-տ փ-օ-ղ-է զ-ք-ա-ր-ր-ա-ռ ա-ւ-ե-տ-ա-ր-ե-ր, ա-ր-ի-ք մ-ե-ո-ե-ա-կ-ը ո-ր-ք յ-Ա-դ-ա-մ-ա-յ, ք-ա-ն-զ-ի ա-հ-ա ե-կ-ն փ-ե-ս-ա-յ»:

Խ-ս-կ Մ-Ի-Ք-Ա-յ-է լ հ-ր-ե-շ-տ-ա-կ-ա-պ-ե-ա-ն ի-ւ-ր զ-օ-ր-ք-ո-վ պ-ա-տ-ե-ր-ա-զ-մ-ա-ծ է և պ-ա-տ-ե-ր-ա-զ-մ-ո-ւ-մ է ս-ա-տ-ա-ն-ա-յ-ա-կ-ա-ն չ-ա-ր զ-օ-ր-ա-ց հ-ե-տ և մ-ի-շ-տ յ-ա-ղ-թ-ա-ձ

Մ-ա-ղ-ա-յ-է լ-ե-ա-ն գ-ն-դ-ի-ն՝ ի-ն-չ-պ-է-ս վ-կ-ա-յ-ո-ւ-մ է ս- պ-ի-բ-ք-ը-ն, «Ե-ւ ե-ղ-ա-ւ պ-ա-տ-ե-ր-ա-զ-մ ե-ր-կ-ն-ի-ք-ո-ւ-մ: Մ-ի-ք-ա-յ-է լ ի-ւ-ր ա-մ-ե-ն հ-ր-ե-շ-տ-ա-կ-ն-ե-ր-ո-վ մ-ի-ա-ս-ի-ն կ-ո-ւ-ո-ւ-մ է-ր վ-ի-շ-ա-պ-ի-ն (Յ-ա-ղ-ա-յ-է լ-ի-ն) հ-ե-տ: Վ-ի-շ-ա-պ-ի-ն է լ կ-ո-ւ-ո-ւ-մ է-ր ի-ւ-ր բ-ո-լ-ո-ր զ-օ-ր-ք-ո-վ (ս-ա-տ-ա-ն-ա-ն-ե-ր-ո-վ): բ-ա-յ-ց յ-ա-ղ-թ-ո-ւ-ե-յ-ա-ւ (Մ-ի-ք-ա-յ-է լ-ե-ա-ն զ-օ-ր-ք-ի-ց) և ե-ր-կ-ն-ի-ց ե-ր-կ-ի-ր կ-ո-ր-ծ-ա-ն-ե-ց-ա-ւ ա-ռ-ա-ջ-ի-ն մ-ե-ծ վ-ի-շ-ա-պ-օ-ձ-ն, ո-ր կ-ո-չ-ո-ւ-ո-ւ-մ է բ-է-ե-ղ-ղ-ե-ր-ո-ւ-դ և ս-ա-տ-ա-ն-ա-յ» (Յ-ա-յ-տ. Ժ-Բ. 7—9, Դ-ա-ն. Ժ. 5—21): «Ե-ւ զ-հ-ր-ե-շ-տ-ա-կ-ի-ն (ս-ա-տ-ա-ն-ա-ն-ե-ր-ը) ո-ր ո-չ պ-ա-չ-ե-ց-ի-ն զ-ի-ւ-ր-ե-ա-ն-ց ի-շ-խ-ս-ա-ն-ո-ւ-թ-ի-ւ-ն-ն, ա-յ-լ թ-ո-ղ-ի-ն ի-ւ-ր-ե-ա-ն-ց բ-ն-ա-կ-ո-ւ-թ-ի-ւ-ն, ի դ-ա-տ-ա-ս-ա-ն-ս մ-ե-ծ-ի. ա-ւ-ո-ւ-ր-ն՝ մ-շ-ս-ն-ջ-ե-ն-ա-ւ-ո-ր կ-ա-պ-ա-ն-օ-ք պ-ա-հ-ե-ա-ց ի խ-ա-ւ-ա-ր-ի» (Յ-ո-ւ-դ-ա 6):

Թ. Հ-Ե-Ղ-Ջ-Ա-Կ-Ա-Պ-Ե-Թ-Ա-Յ Պ-Ա-Ս-Ա-Կ-Ա-Բ-Գ-ո-ւ-թ-ի-ւ-ն, ո-ր ա-ւ-ե-լ-ի մ-օ-ւ ե-ն մ-ե-զ հ-ո-ղ-ե-ղ-ի-ն-ա-ց-ս: Ա-յ-ս դ-ա-ս-ա-կ-ա-ր-գ-ի հ-ր-ե-շ-տ-ա-կ-ն-ե-ր-ի-ց է-ի-ն Ա-բ-ր-ա-հ-ա-մ ն-ա-հ-ա-պ-ե-տ-ի հ-ի-ւ-ր ե-կ-ո-ղ-ն-ե-ր-ն, Ս-ո-ղ-ո-մ և Գ-ո-մ-ո-ր կ-ո-ր-ծ-ա-ն-ո-ղ և Ղ-ո-վ-տ-ը ի-ւ-ր գ-ե-ր-դ-ա-ս-տ-ա-ն-ո-վ ա-զ-ա-տ-ո-ղ-ն-ե-ր-ն, Խ-ս-ա-հ-ա-կ-ի փ-օ-խ-ս-ա-ր-է-ն խ-ո-յ-ը — գ-ո-հ-ի ո-չ-խ-ս-ա-ր-ը — Ա-բ-ր-ա-հ-ա-մ-ի-ն ց-յ-ց տ-ո-ւ-ո-ղ-ն, Յ-ա-կ-ր-վ-ը ն-ա-հ-ա-պ-ե-տ-ի-ն դ-ի-մ-ա-ւ-ո-ր-ո-ղ-ն-ե-ր-ն (Յ-ն-ն. Լ-Բ. 1—2), Ա-ս-մ-ս-ո-ն-ի և Ք-ր-ի-ս-տ-ո-ս-ի ծ-ն-ո-ւ-ն-դ-ն-ե-ր-ը ա-ւ-ե-տ-ո-ղ-ն-ե-ր-ն, «փ-ա-ռ-ք ի բ-ա-ր-ձ-ո-ւ-ն-ս» ե-ր-գ-ո-ղ-ն-ե-ր-ն, Ք-ր-ի-ս-տ-ո-ս-ի յ-ա-ր-ո-ւ-թ-ի-ւ-ն-ը և հ-ա-մ-բ-ա-ր-ձ-ո-ւ-մ-ը ք-ա-ր-ս-զ-ո-ղ-ն-ե-ր-ն և-լ-ն. և-լ-ն:

Ա-յ-ս դ-ա-ս-ա-կ-ա-ր-գ-ի-ց ե-ն ա-յ-ն ա-մ-ե-ն հ-ր-ե-շ-

տակներն, որք Աստուծոյ կողմից յուղարկւում են ամեն մլրառւած քրիստոնեայ հաւատացելոց հոգիները պահպանելու համար. «Ո՞չ ապաքէն (Հրեշտակը) հոգիք են հարկաւորք, որք առաքինի սպասաւորութիւն վասն այնոցիկ, որք ժառանգելոց են զիրկութիւնն» (Եբր. Ա. 14. Գ. թադ. Ժ. մ. 5—7): «Բանակը տեսան շուրջ են զերկիղանովք իւրովք» (Սաղ. Ա. 8. Ծնն. Լ. Բ. 1—2):

Ճշմարիտ աստուածապաշտներն յանձնարարուած են հրեշտակաց խնամոց պահպանութեան. Երբ մենք վշտացնում ենք մեկզմէկ, մեր պահպան հրեշտակներն գանգատում են Հօր Աստուծոյ. «Զգոյշ լերուք մի արհամարչեցէք զմի ոք ի փոքրկանց յայսցանէ, ասեմ ձեզ զի հրեշտակը նոցա յերկինս հանապակ տեսանեն զերեսս Հօր իմոյ որ յերկինս է» (Մատ. Ժ. մ. 10):

Իւրաքանչիւր զղջացող և ապաշխարող մեղաւորի համար մեծապէս կուրախանան հրեշտակներն երկնքում: «Ամէն ասեմ ձեզ. զի այսպէս է ուրախութիւն յերկինս վասն միոյ մեղաւորի՝ որ ապաշխարիցէ՝ քան վասն իննսուն և ինն արդարոյ՝ որոց չիցէ պիտոյ ապաշխարութիւն» (Պուկ. Ժ. ե. և 10, և 17—32):

Մարդոց համար երկնքում միշտ աղօթք են անում հրեշտակներն. «Եւ հրեշտակը ի

բարձունս աղաղակեն և ասեն. ողորմեա՛, Դու ստեղծեր, մի կորուսաներ»:

Իւրաքանչիւր պահպան հրեշտակ իւր պահպանած մարդն մեռնելուց յետոյ՝ առնում է նորա հոգին և տանում երկինք. «Եղե մեռանել աղքատին (Վաղարոսին) և տանել հրեշտակացն զնա ի գոգն Արբահամու» (Ժ. Զ. 22). «Եւ հնձորքն հրեշտակը են» (Մատ. Ժ. Գ. 39):

Որովհետեւ հրեշտակներն այսչափ խնամք ունին մեզ վերայ, վասն որոյ եկեղեցին սահմանած է ամեն տարի մի օր, որի մէջ կատարում ենք «սրբոց Հրեշտակապետացն Դաբրիելի և Միքայելի և ամենայն երկնային զօրաց» յիշատակութիւնը՝ երախտագէտ զգացմամբ:

Այժմ ի բոլոր սրտէ շնորհակալ լինինք Տէրից, որ իւր անհուն մարդասիրութեամբ մեր վերայ կարգած է պահպան հրեշտակներ. մեզ նման մեղաւոր և անառակ մարդիկը յանձնած է նոցա խնամոց և արթուն հսկողութեանց:

Հեղունեան և խոնարհունեան օրինակ առնենք մեզ համար Աթուուց դասակարգք, որպէս զի նոցա թևերի վերայ հանգստացող Աստուածութիւնն հանգստանայ և մեր սրտերում. «Ես յոհ հանգեայց, եթէ ոչ իշեզ և ի խոնարհս»: «Ես և Հայր իմ առ նա եկեսցուք և օթեանս

առ նմա արասցուք։» Քերովբէից և Սերովբէից  
դասակարգերի նման չհեռանանք Աստուածու-  
թեան մօտից, այլ սուրբ սրտով և սրբասաց  
օրհներգութեամբ անդադար օրհնենք, գովենք  
և փառարանենք խորին երախտագիտութեամբ  
Հայրը, Որդին և Ս. Հոգին։ Տէրութեանց,  
Զօրութեանց, Խշանութեանց և Պետութեանց  
գնդերի հետ խառնենք մեր մաղթանքները և  
գովութիւնները և բարձրացնենք առԱստուած։  
Միքայէլեան դասակարգի նման միշտ պատե-  
րազմենք մոլութեանց և մեղաց հետ և սատա-  
նայական գործոց հետ և Աստուծով յաղթող  
հանդիսանանք ասելով, «Եղիցին կամք Քո որ-  
պէս յերկինս և յերկրի» ամէն։

### ՔԱՐՈՇ ԺՈ.

«Իմաստուն կանայք շինեցին տունս,  
իսկ անզգամբն ձեռօք իւրեանց կոր-  
ծանեցին» (Առ. ԺԴ. 1)։

Մարդկութիւնն կազմուած է գերդաս-  
տաններից. կրթութեան բովն է ընտանիքն,  
գերդաստանի բովի մջ են հալուում, պա-  
տում, կռանուում, դարբնուում; դաստիա-  
րակուում արական և իգական մանկուին և  
լինում օգտակար կամ ընտակար անդամ գեր-  
դաստանի, ազգի և Մարդկութեան։

Բաժանուած են տան գործերն, մարդոյ  
բաժինն է, արդարութին և նկանական (կամ անդա-  
յին) գործերն, իսկ կնոջ բաժինն է ներ+ին, բա-  
րյական և առային գործերն։ Մարդն համար-  
ւում է տան թագաւորն, իսկ կինն՝ տան թա-  
գուհին։ Որբան բարձր է հոգին մարմնից,  
այնքան էլ գժուարին է հոգու դաստիարակու-  
թիւնն մարմնոյ դաստիարակութիւնից։ Եթէ  
օգտակար է մարմնոյ առողջութիւնն և կրթ-  
ութիւնն, ուրեմն ամենաօգտակար է հոգու  
առողջութիւնն, կրթութիւնն և ազնուու-  
թիւնն, ինչպէս վկայում է Պօղոս ս. առա-  
քեալն ասելով. «Զի մարմնոյ կրթութիւնն առ-  
սակաւ ինչ օգտակար է, իսկ աստուածաց-  
տութիւն առ ամենայն ինչ օգտակար է, և  
զաւետիս կենաց ունի զարդիս և զհանդեր-  
ձելոցն» (Ա. Տիմ. Դ. 8)։

Աշխարհիս ամենամեծ ուսումնարանն և  
ազդու կրթարանն է Մայրենի Գիւին, և ամենա-  
երկելի դաստիարակներն են Հայրենին։ Հոգինե-  
րի կրթութեան գործն յանձնուած է մայրե-  
րին նոյն իսկ բնութիւնից։ Ընտանեկան շրբ-  
ջանում մանուկներն ծնած օրից իւրեանց  
աչքեռո բացածին պէս՝ նախ տեսնում են  
իւրեանց մայրերը և ծանօթանում նոցա  
հետ։ Մի քանի տարի՝ գիշեր և յերեկ ապ-  
րելով ծնողաց գրկում հետպահանդանում

են և սովորում թոթովել մայրենի լեզուն:

Մանկանց միտքն նման է լուսանկարչական գործիքի, խսկոյն նկարուում են նոյա փափուկ մոսաց մէջ ամեն առարկայ, ամեն բառ և լար գործերի տիպերն, ծնողաց և մերձաւորաց նիստ ու կացն, խօսակցութիւնների ու աղօթքների, օրհնութիւնների ու անէծքների, վերջապէս թէ՛ լսու և թէ՛ վար գործերի տպաւորութիւններն նոյնութեամբ խսկոյն նկարուում են մանկանց մաքերի և ուղեղների վերայ: Այս տպաւորութիւններն՝ թէ՛ լսու լինին և թէ՛ վար, թէ՛ օդապակար լինին և թէ՛ վնասակար՝ միայն մահուամբ կը հեռանան մարդից և կնոջից:

Ինչպէս մարդկութիւնն, նոյնպէս և ամբողջ աղգերն կը թուում են մայրական բովի մէջ, այս տեղ ընտանեաց ծոցում — կը թուում և պատրաստում են նաև աղգերի հոգեւոր և մարմնաւոր առաջնորդներն և կառավարիչներն և կը թեալ ժողովուրդ: Լաւ կը թութիւն ստացածներն ոչ միայն լաւ և օրինակելի հայրեր և մայրեր կը լինին, այլ և ողջախոհ և բարոյական տպաջնորդներ, միշտ դէպի բարին և օգտակարն տանող կառավարիչներ և զեկավարներ, հասարակութեան ընտիր և տնտեսագէտ հայրեր և մայրեր և աղգի ու մարդկութեան պարձանք: Ահա սորա համար է ա-

սում Սողոմոն. «Իմաստուն կանայ+ շնեցի՞ն պու-նել»: Ընդհակառակն անզգուշ, անբարոյական և անառակ ընտանեաց ծոցում կը թուում են և պատրաստուում աղգերի համար անբարոյական հասարակութիւն, անառակ և անդոնքնուածէր հայրեր և մայրեր, անբարոյական և անառած առաջնորդողներ, դէպի կորուպեան անդունդըն տանող կառավարիչներ, զեկավարներ, իշխաններ, հասարակութեան համար՝ որդեռ և ցեցեր, եկեղեցեաց համար՝ հաւատութաց և գայլազգեստ ժողովուրդ, և դժոխքի համար էլ շատ զաւակներ: Ահա սորա համար է անում Սողոմոն. «Իսկ անգնամ (կանայ+ն) է-ցեանց յեւ-ուկ կործանեցին է-ցեանց և աղդէն պուները:

Մանուկները փորը ինչ մեծանալուց յետոյ՝ հարուստ ծնողներն յանձնում են դաստիարակ կանանց կամ օրիորդաց, մանաւանդ օտարազգի կանանց և օրիորդաց: Այսպիսի օտարազգի դաստիարակներն, որ կը զուում են կուեւանակայ և ընդհանրապէս ծառայում են քաղաքներում, ամեններն օդապակար չեն հայ երախաններին, այլ բոլորովին վնասակար և աղդակործան: Այդպիսի օտարազգի դաստիարակներն առաջնորդում են հայ երախաններին գէպի ապագայ կործանումն: Այս սոքա տանում են մեր երախանները դէպի հաւատուի, եկեղեցու, դաւանանունեան, լեզուի և բա-

բոյականութեան կործանումն. “Ե ունիցի ական-  
ջը” լուսոյ, լուսիցէ:

Երբ հասնում են երախայր ուսման հա-  
սակին, այդ մատաղերամ մանկան ամենեին  
յանձնելու չէ անբարյական, բարիա-  
շող ծեծող և ինժնահասառն վարժապետի և վար-  
ժուհու, այլ յանձնելու է աղնիւ, բարյական,  
հեզ համեստ և խոնարհ ուսուցիչների և ու-  
սուցչուհիների, որպէս զի ապագայում լինին  
լաւ հայրեր և մայրեր:

Ծնողներն զգուշանալու են որ իւրեանց  
որդիքն և հարսներն և օրիորդներն ընկե-  
րանան անբարյական անձանց և ընտանեաց  
հետ:

Հայոց մայրեր, կաղօթեմ որ ձեր ցանած  
բարյական սերմերն՝ ձեր զաւակաց փա-  
փուկ սրտերի անդաստաններում՝ մանկացեալ  
Յիսուս Քրիստոս աճեցնէ, պտղաբեր անէ ա-  
ռանց որոմանց և ձեր որդիքը, հարսները և  
օրիորդները բարի յիշատակ անէ ի միսիթա-  
րութիւն ծնողաց, յանդամակցութիւն Հայ  
ժողովրդեան և ի պարծանս Հայաստանեայց  
Ա. Եկեղեցու, ամէն:

